

3593

3 K 33

П - 95

145
Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՌՍԴԲԿ
ԼՈՆԴՈՆԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ



ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՏՈՒԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1940

329.15(47)(09)
Ա-90

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ


145
20 NOV 2009

3K33
Ռ-95
այ.

28 JUN 2005

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(ԴԵԼԵԳԱՏԻ ՆՈՐԵՐ)





2575
40

И. В. СТАЛИН
ЛОНДОНСКИЙ С'ЕЗД РСДРП

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

Ա.Ռ.Ա.ԶԱՐԱՆ

ՌՍԴԲԿ Հինգերորդ (Լոնդոնի) Համագումարը պատմական մեծագույն կարեորություն ունեցող համագումար է: Այդ համագումարում, հեղափոխության բեկումնային մոմենտում, բոլշևիկյան կուսակցությունն իր տակտիկայի համար հայանություն ստացավ վոչ միայն ռուս բանվորների մեջ, այլ նաև լեհական և բալթիկական սոցիալ-դեմոկրատների կազմակերպությունների մեջ:

«Ամբողջ Ռուսաստանի առաջավոր բանվորների փաստական միավորումը վորպես միասնական համառուսական կուսակցություն՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ—այս է Լոնդոնի համագումարի իմաստը, այս է նրա ընդհանուր բնույթը»¹: Ընկեր Ստալինն այսպես է բնութագրել ՌՍԴԲԿ Լոնդոնի համագումարը 30 տարի առաջ:

Հայտնի չէ, վոր Ստոկհոլմի IV («Միավորիչ») համագումարում 1906 թվին մենչևիկները «Հաղթող» դուրս չեկան: Մենչևիկներին հաջողվեց այս «Հաղթանակը» ձեռք բերել նախ՝ շնորհիվ այն բանի, վոր նրանց հաջողվեց ազդային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ միավորվելու հարցը տեղափոխել համագումարի վերջը և այդպիսով զրկել լեհերին, բալթիկներին և բուլղականներին քվեարկությանը մասնակցելու իրավունքից: Յերկրորդ՝ մենչևիկներին հաջողվեց այս «Հաղթանակը» ձեռք բերել շնորհիվ այն բանի, վոր նրանց կազմակերպությունները, որինակ Անդրկովկասում, անասելի չափով փրկվել էյին այն բանի հետևանքով, վոր մենչևիկյան կազմակերպությունների մեջ մտել էյին մարքսիզմի հետ ընդհանուր վոչինչ չունեցող հազարավոր մարդիկ, այն է՝ վոչ միայն սոցիալական դրոշյամբ, այլև իրենց իդեոլոգիայով մանր բուրժուաները՝ արհեստավորական Թիֆլիսն այդ համագումարն ուղարկեց այնքան դեղեղատներ, վորքան պրոլետարական Պետերբուրգը:

¹ Ի. Ստալին, ՌՍԴԲԿ Լոնդոնի համագումարը (Դեկտաի նոթեր): Протоколы V с'езда РСДРП, стр. X, Партиздат, 1935 г.

Թե ինչպիսի հաղթանակ էր մենչեիկներին այդ «հաղթանակը», կարելի չե՞ դատել նրանով, վոր արդեն միջանի ամիս հետո մենչեիկները բոլոր քիչ թե շատ խոշոր կազմակերպություններում լիակատար պարտություն կրեցին: Մենչեիկները թաղում էին հեղափոխությունը, ցարիզմի հետ համաձայնություն էին փնտռում, ուղիներ էին փնտռում, վորպեսզի «ներաճեն» սոցիալիստական միապետության մեջ: Մենչեիկները ձգտում էին բանվոր դասակարգին յենթարկել լիբերալ բուրժուազիայի ադդեցությունը, իսկ բանվոր դասակարգը դեռևս զենքը ցած չէր դրել, գլուղացիությունը դեռևս հույս ուներ հեղափոխական ձևով հողը խել կալվածատերերից: Յեւ այն ժամանակ, յերբ մենչեիկներն արգեն 1906 թվին թաղում էին հեղափոխությունը, հեղափոխության գերեզմանավոր լինելը պատվի գործ էին համարում, բոլշևիկները մասսաներին նոր գրոհի էին պատրաստում ցարական ինքնակալության դեմ:

Մրա ցայտուն ապացույցը հանդիսանում է ռազմական և մարտական կազմակերպությունների բոլշևիկյան կոնֆերենցիան, վորը հաջորդեց 1906 թվին նոյեմբերին Տամբոֆորում՝ Ֆինլանդիայում: Լենինն այդ կոնֆերենցիայի վորոշումներին և նրա հենց կազմակերպմանը լիակատար համաձայնությամբ փերաբերվեց: ՌՄԴԻԿ նոյեմբերյան ռազմա-մարտական կոնֆերենցիայի արձանագրությունների առթիվ գրած հատուկ հոդվածում Լենինն ընդգծում էր հսկայական նշանակությունն այն բանին, վոր կոնֆերենցիան առաջ քաշեց վորպես մարտական կազմակերպությունների գլխավոր խնդիրներից մեկը գեղմած ապրա-տամբության ճիշտ հասկացողության տարածումը:

Բոլշևիկյան գիծը հաղթանակում էր մոչ միայն իդեալես, — այն հաղթանակում էր նաև կազմակերպորեն: Պետերբուրգում տեղի ունեցած համառ պայքարից հետո ապրիլի 7-ին (մարտի 25-ին) Պետերբուրգի կազմակերպության կոնֆերենցիան, վորը հրավիրվել էր ղեմնկրատական ընտրությունների հիման վրա՝ մենչեիկյան ԿԼ-ի հատուկ հանձնաժողովի հսկողությամբ, ճնշող մեծամասնությամբ արտահայտվեց հոգուտ բոլշևիկներին: Կազմակերպության ընտրություններին մասնակցած 7.332 անդամից 5.166-ը՝ արտահայտվեց բոլշևիկների ոգտին և 2.156-ը՝ մենչեիկներին ոգտին:

Զի խանդարում հիշատակել, վոր այդ կոնֆերենցիային և կուսակցության Լոնդոնի համադումարին նախորդեց Լենինի խիստ յեղոյթը՝ «Выборы в Петербурге и лицемерие 31 меньшевика» խրաղիրը կրող մի բրոշյուրով, վորն ուղղված էր կադետացող մենչեիկներին դեմ: Յերբ մենչեիկները տեսան, վոր բանվոր դասակարգի թիկունքում կադետների, լիբերալ բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու իրենց փորձերը մերկացվեցին բոլշևիկների կողմից, նրանք վճռեցին պառակտել Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, վորի համախմբումը պահանջել էր այնքան վիթխարի ջանքեր:

IV համադումարում ընտրված մենչեիկյան ԿԼ-ը համոզվեց, վոր Պետական Դումայի ընտրությունների առթիվ 1907 թվի հունվարին հրավիրված կոնֆերենցիան մեծ մասամբ կազմված է բոլշևիկներից: Այս ԿԼ-ը փորձ արեց կոնֆերենցիան արհեստականորեն բաժանել ախպես, վորպեսզի ջախջախի բոլշևիկյան այդ մեծամասնությունը, իսկ յերբ այդ չհաջողվեց, մենչեիկներն այդ կոնֆերենցիայից հեռացան, և Լենինը հանդես յեկավ մենչեիկներին դեմ, խաղաղանելով նրանց՝ կեղծավորության համար:

Լենինի դեմ սարքած «դատը» վերածվեց մենչեիկների դեմ ուղղված դատի: Մենչեիկների կեղծավորությունը մերկացվեց: Այլևի դժվար էր ընթանում Անդրկովկասի բանվորական մասսային և աշխատավորներին բոլշևիկների կողմը նիաճելը: Անդրկովկասում այդ պայքարի մեջ, մարքսիստական կազմակերպությունների գոյություն հենց սկզբից, վիթխարի դեր էր պատկանում ընկեր Ստալինին: Ինքն՝ ընկեր Ստալինը, հիշատակելով Բազմում կատարած իր աշխատանքի այդ ժամանակաշրջանը, համեստ կերպով այն կոչում է մի ժամանակաշրջան, յերբ ինքը դարձավ «հեղափոխության յենթավարպետ»: Ընկեր Ստալինն իր ուսումը բաժանում է յերեք ժամանակաշրջանի. առաջինն այն ժամանակաշրջանն է, յերբ նա Թիֆլիսի յերկու-թուղային բանվորների խմբակներում 1898 թվին «դարձավ հեղափոխության աշակերտ». յերկրորդ ժամանակաշրջանը, 1905—1907 թվականները, ընկեր Ստալինը գլխավորապես անց է կացրել Բազմի բանվորների մեջ: «Նավթային արդյունաբերության բանվորների մեջ տարած հեղափոխական աշխատանքի յերկու տարիներն ինձ կոփեցին, վորպես գործնական մարտիկ և գործնական ղեկավարներից մեկի: Մի կողմից Բազմի առաջավոր այնպիսի բանվորների հետ, ինչպես՝ Վացեկը, Մարատովեցը և ուրիշները, ունեցած չիման մեջ, մյուս կողմից բանվորների ու նավթարդյունաբերողների միջև ծագող խորագույն կոնֆլիկտների փոթորկում, յես առաջին անգամ իմացա, թե ինչ է նշանակում ղեկավարել բանվորների մեծ մասսաներ: Այնտեղ, Բազմում, յես ստացա, այսպիսով, յերկրորդ մարտական հեղափոխական միտություն: Այստեղ յես դարձա հեղափոխության յենթավարպետ»:

Հեղափոխական իր յերրորդ միտությունն ընկեր Ստալինը համարում է Ռուսաստանում՝ ոուս բանվորների մեջ 1917 թ. Լենինի ղեկավարությամբ Պետերբուրգում կատարած իր աշխատանքը, վորտեղ նա «դարձավ հեղափոխության վարպետներից մեկը»: Սակայն մենք պետք է ասենք, վոր արդեն առաջին հեղափոխության ժամանակաշրջանում նա, անկասկած, յեղել է հեղափոխության վարպետը, և նա հսկայական հարգանքով էր ոգտվում վոչ միայն անդրկովկասյան բոլշևիկյան վոգրիկ դեյ-

գացիայի շրջանում, այլ այդ հարգանքը դեպի նա տածում էր բոլշևիկյան մարդը կուսակցութիւնը:

Ընկեր Ստալինը Բազլում հարկադրված էր պայքարել մեն- շևիկների գերուժութեան դեմ, վորոնց բացահայտորեն հովանա- վորում էին կառավարութեան դործակալներն ու կապիտալիստ- ները: Հայտնի չէ, վոր մենշևիկ Շենդրիկով յեղբայրները Բազլի բանվորական կազմակերպութիւնն այն աստիճան էին փչացրել, վոր կապիտալիստներից դրամական նվերներ էին ընդունում: Այդ՝ յուրատեսակ մենշևիկյան գուբառովշչինա յեր, վորի դեմ միմարար և անդադրում պայքարում էր ընկեր Ստալինը, համախմբելով Բազլի առաջավոր յաւագույն բան- վորներին:

Լոնդոնի համագումարին Անդրկովկասի բոլշևիկները ներկա- յացված էին փոքրիկ դելեգացիայով, վորի մեջ մտնում էին ընկերներ Ստալինը, Ստեփան Շահումյանը, Միխայ Յիսակյան և Ասատուր Կախոյանը: Մենշևիկներն ամեն կերպ աշխատում էին փիճարկել ընկեր Ստալինի մանդատը, վոր նա ստացել էր Բորչալվի կոնֆերենցիայում, վորի ընտրութիւններին մաս- նակցել էր ավելի քան հազար մարդ: Բորչալվի սոցիալ-դեմո- կրատները այդ խմբակը 1906 թվի հուլիսին Թիֆլիսի Կոմիտէի կողմից հաստատվել էր վորպէս ռայոնական խումբ: Բայց յերբ բորչալվեցիները կուսակցութեան համագումարի անդամ ընտրե- ցին յերկու բոլշևիկների, մենշևիկյան մարդը դելեգացիան ծա- ռացավ բորչալվեցիների դեմ: Մենշևիկները բոլոր հիմքերն ունէին վախճալու ընկեր Ստալինից, վորը նրանց անհաշտ, մահացու թշնամին էր:

Ընկեր Ստալինի գործունեյութեան շնորհիվ Բազլի մամուլը 1907 թվին և հետագա տարիներին («Бакинский Рабочий», «Гудок», «Бакинский пролетарий», թուրքերեն լեզվով «Յու- դաչ» («Ընկեր»), «Քոչդեմետ» («Կոչ») թերթը և ռուսերեն, թուրքերեն ու հայերեն յուշ տեսնող մի շարք այլ հրատարա- կութիւններ) հակապական դեր խաղաց Անդրկովկասի բանվորնե- րին բոլշևիկացնելու գործում:

* * *

ՌՄԴԻԿ Ն (Լոնդոնի) համագումարն իր կրքոտ տոնով և ար- տասովոր կատարի պայքարով բացառիկ յերևույթ է մեր կու- սակցութեան պատմութեան մեջ: Բաւական է ասել, վոր որա- կարգն ընդունելու և համագումարի ռեզոլուցիոն մշակելու հա- մար պետք յեղավ վեց նիստ: Կուսակցութեան փոչ մի համագու- մարում չի յեղել այդպիսի քանակով անվանական քվեարկու- թիւն (տասնչորս անգամ), ընդվորում անուն առ անուն քվեարկ- վում էին փոչ միայն կարևորագույն բանաձևերը, այլ յերբմի նաև ուղղումները, իսկ այդ ուղղումներն այնքան շատ էին,

վոր, որինակ, դեպի փոչ-պրոլետարական կուսակցութիւններն ունենայիք վերաբերմունքի հարցի առթիվ մենշևիկներն ու բուն- գականները մայրին 70 ուղղում:

Ռուս դելեգատների համար համագումար մեկնելն իսկ իրենից ներկայացնում էր արկածների յուրահատուկ մի փոփ- սական, դելեգատներ, վորոնք սովոր չէին արտասահմանի կյան- քին և մեկ յերկրից մյուսը տեղափոխվելուն: Հայտնի չէ, վոր համագումարը նշանակված էր Կոպենհագենում, բայց կառավա- րութիւնը Կոպենհագենում թույլ չտվեց համագումարը բաց անել: Այն ժամանակ վորձ արվեց համագումարը հրաժիրել Շվեդիայի Մարմե քաղաքում, բայց այնտեղ էլ փոստիկանու- թիւնն արգելեց բաց անել համագումարը: Այն ժամանակ հա- մագումարը չողենալիս նստեց և հայտնվեց Լոնդոնում: Առանց դրամի, առանց շենքի դելեգատների մեծամասնութիւնը հար- կադրված էր գլխերը գլխերով լեռնում, անտուն թափառաչըր- ջիկներ միջև, Կերրինգտոնհատւում: Համագումարը բաց արին փոքրիկ Բալմա-Ստրիպ յեկեղեցում, վորը վարձակալել էր Փա- րիսական ընկերութիւնը (Փարիսականների ընկերութիւնն անգլիական «խաղաղ» սոցիալիստներն են):

Դելեգատների վիթխարի մեծամասնութիւնը համագումարի ալպայի կազմակերպման պատասխանատւութիւնը դնում էր մենշևիկյան Կենտկոմի վրա: Բայց, իհարկէ, նյութական այդ գրկանքներն ու անհարմարութիւնները չէին, վոր համագումա- րի մեծամասնութիւնը տրամադրում էին մենշևիկների դեմ: Մենշևիկները համագումարին ներկայացան վորպէս կապիտա- լանտներ, վորպէս այնպիսի մարդիկ, վորոնք պատրաստ էին նահանջել և նահանջում են շատ հեռու հակահեղափոխութեան ճնշման տակ:

Համագումարից առաջ կուսակցական համագումարի առթիվ հրապարակված մենշևիկյան նախագիծը քննադատելով, Լենինը գրում էր, թէ «մենշևիկյան քաղաքական միտքը առաջ է շարժ- վում խեցդետնի նման»¹: Մենշևիկները կապիտալիստների հետ գոր- ծարք կնքելու ուղիներ էին փնտռում, նրանք հեղափոխական մասսա չէին տեսնում: Իրականում մենշևիկները ժողովրդի մեջ ամբապնդում էին Դումայի միջոցով որևէադրական ռեֆորմներ անցկացնելու հաւատը և թուլացնում էին հեղափոխական պայ- քարի հաւատը: Նրանք շարունակում էին գյուղացիութեան, վորպէս հեղափոխական ուժի նկատմամբ քարոզել արհամար- հական այնպիսի վերաբերմունք, վորը հակառակ էր կուսակցու- թեան ծրագրերին: Մենշևիկները կարծիքների ավելի շատ տարբե- րութիւն ունէին կուսակցութեան մեծամասնութեան հետ, այ- սինքն առաջավոր բանվորների ու գյուղացիների հետ, քան կա- դետների, այսինքն լիբերալ բուրժուազիայի հետ:

1 Լենին, Յերկ., հատ. XI, ռուս. հրատ., էջ 52:

Համագումարը թե ղեկեղացիայի կազմով և թե ծախսային ղեկավարությամբ ցույց տվեց, Վոր «բոլշևիկների տակտիկան» հանդիսանում է խոշոր արդյունաբերական պրոլետարների տակտիկան, այն ռադիկալների տակտիկան, վորոնեղ դասակարգային հակասություններն առանձնապես պարզորոշ են և դասակարգային պայքարն առանձնապես սուր է: Բոլշևիկները իսկական պրոլետարների տակտիկանն են: Մենշևիկները «մենշևիկների տակտիկան» հանդիսանում է առավելապես արհեստագործական բանվորների և գյուղացիական կիսապրոլետարների տակտիկան», վոր «մենշևիկները—դա պրոլետարիատի կիսաբուրժուական տարրերի տակտիկան են»¹:

Բուն համագումարում մենշևիկներն ամեն կերպ ցանկացան որ իրենք ևս ազատվեն հեղափոխական պայքարի ընդհանուր սկզբունքային հարցերը ղեկելուց և քննարկելուց: Այս պատճառով կրքոտ պայքար ծավալվեց հենց բոլշևիկների առաջադրած որակարգ ընդունելու շուրջը, սրակարգ, վորի մեջ գրված էլին այդ ընդհանուր հարցերը, որինակ՝ անտեսական պայքարի սրբվելը և ժամանակակից մոմենտը, պրոլետարիատի դասակարգային խնդիրները բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակակից մոմենտում: Մենշևիկներն այդ հարցերը չբնականորեն իրենց ցանկությունը բացատրում էլին նրանով, վոր դրանք «վերացական» հարցեր են. պարզ էր, վոր նրանք խուսափում էլին հեղափոխության սկզբունքային կարևորագույն հարցերը ղեկելուց: Նրանց հաջողվեց շեղել այդ հարցերի քննարկումը, ոգտագործելով ցենսորիստական տատանումները, վոր յերևան բերեց ազգային կազմակերպությունների գերեզմանների մի մասը, առանձնապես այն աջակցության շնորհիվ, վոր նրանց ցույց տվեց բունդականների մեծամասնությունը:

Ճիշտ է, մենք տեսնում ենք, թե ինչպես սկզբունքային հարցերում համագումարը յերկու մասի բաժանվեց՝ ոպորտունիստական—մենշևիկյան, աջ թև և հեղափոխական—բոլշևիկյան թև: Դրության մեջ վորոշ որիգլինալություն մացրեց այն, վոր մենշևիկները կարողացան գրավել նիստերի դահլիճում շենքի ձախ մասը: Հասկանալի չէ, վոր դրանից նրանց դիրքերը մաղաչափ անգամ չփոխվեցին, ինչպես Կոխովի առակում. «Իսկ դուք, իմ բարեկամներ, ինչպես էլ վոր նստեք, դուք յերաժիշտ դարձող չեք»: Քվեարկությունը ցույց տվեց, սակայն, վոր գեյն-դատները մի մասը տատանվում էր նաև սկզբունքային առանձին հարցերում: Հետևյալ փոքրիկ աղյուսակը ցույց է տալիս այդ տատանումների չափը:

1 Ի. Ստալին, ԲՍԴԻԿ Լոնդոնի համագումարը (Դեկտեմբերի նոթեր): Протоколы V съезда РСДРП, стр. XI—XII, Партиздат, 1935 г.

	Բոլշևիկյան բանաձևի ոգտին	Դեմ	Ձեռնպահ
1) Դումայի Ֆրակցիայի գործունե- յության ղեհատականը	149	148	1
2) Դեպի վոչ-պրոլետարական կու- սակցություններն ունենալիք վե- րաբերմունքի մասին	163	122	8
3) Բանվորական համագումարի ակ- տիվության իղևան	165	94	21
4) Պետական Դումայի մասին	157	110	11

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր, որինակ, դումայական Ֆրակցիայի գործունեյության ղեհատականի առթիվ, —իսկ այս հարցն առաջին տեղն էր գրավում—համագումարը բաժանվեց յերկու հավասար մասի: Այն ժամանակ յատիշական գեյն-դացիան առաջարկություն մացրեց համագումարի բանաձևն ընդունելը հետաձգել, քանի վոր շատ դեբեդատներ գեղևս գյուլի չէլին հանում այդ հարցից: Հոգուտ այդ առաջարկության քվեարկեցին 149, դեմ 144 և ձեռնպահ մնացին 5: Այստեղ ել նկատելի չէ խիստ տարակարծություն:

Այս առաջին յուրը քվեարկությունն էր, յերբ բոլշևիկները գերակշռություն ստացան (յեթե չհաջվենք, վոր համագումարի նախագահության մեջ Լենինին ընտրելու ոգտին քվեարկեցին 144 դեկտեմբեր, իսկ Պլեխանովի ոգտին՝ 120), և այդ գերակշռությունը վճռեց այդ համագումարի համարյա բոլոր կարևորագույն քվեարկությունները: Սակայն հարկ է մատնանշել, վոր յերբ բանը հասավ քվեարկության արդյունքները կազմակերպորեն ամրապնդելուն, որինակ, կենտրոնական հիմնարկների ընտրության հարցի վերաբերյալ, լեհական, յատիշական և յուսկական ավելի մեծ թվով դեբեդատներ տատանում ցուցաբերեցին և վործեցին ցենսորիստական դիրք գրավել: Բունդական Լիբերն այսպիսի հիմնափորում տվեց դրան. «Մենք պետք է ամեն ինչ անենք, վորոնցով թույլ չտանք, վոր Ֆրակցիան հաղթանակի կուսակցությանը»: Իրականում վոչ միայն բունդական Լիբերը, այլև բունդականների մեծամասնությունը հենց ամեն ինչ արեց համագումարի ոպորտունիստական մենշևիկյան մասին ոգնելու համար, մենշևիկյան Ֆրակցիային ոգնելու համար: Մի ուրիշ դեկտեմբեր, լեհական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչը, ասում էր. «Այդ մեր կողմից անսկզբունքայնություն չէ: Մենք կողմնակից չենք տարաձայնություններն սքողելու, բայց մենք, ազգային կազմակերպություններս, ասում ենք,—թույլ յերկու հոսանքներն էլ պարզանան և իղեական ճիշտ պայքար մղեն, մինչև վոր ինքը կյանքը կապացուցի, վոր այդ հոսանքներից մեկն ավելի շատ իրավունք ունի լինելու պրոլետարական շահերի ար-

տաճարային և ավելի յե համապատասխանում պրոլետարիատի դասակարգային պայքարին»:

Իհարկե, այդպիսի տեսակետը ձեռնառու յեր բոլշևիզմի թշնամիներին:

* * *

Մենչևիկները կշտամբում էյին Լենինին ուսուցողական համաձայնողականների դեմ ուղղված խիստ տոնի համար, նրանք այդ տոնի համար նրան դատեցին: Լենինն՝ իր Докладе V съезду РСДРП по поводу петербургского раскола и связанного с ним учреждения партийного суда» հոդվածում ընդունում էր, վոր ինքը գիտակցաբար է ընտրել այդպիսի խիստ տոն, վոր իր ձևակերպումների նպատակը հենց այն է, «վորպեսզի ընթերցողների մեջ առեւելթյուն, զղմանք և արհամարհանք առաջացնի» մենչևիկների վերաբերմամբ: Լենինն իրեն խնդիր էր դնում վոչ թե շտկել մենչևիզմը, այլ «վոչնչացնել, յերկրի յերեսից ջնջել նրա կազմակերպությունը»:

Մենչևիկներն իրենք էյին կազմակերպության մեջ պառակտում առաջացրել, և Լենինը գործում էր այնպես, ինչպես ամեն մի պրոլետարական հեղափոխական պետք է գործեր պառակտվող կազմակերպության վերաբերմամբ:

«...պառակտումը պարտափորեցնում է պառակտվածներին ղեկավարության տակից դուրս կորզել մասսաներին, — գրում էր Լենինը: — Ինձ ասում են. դուք խառնակություն էյիք մտցնում պրոլետարիատի շարքերի մեջ: Յես պատասխանում եմ. յես դիտակցաբար և դիտավորյալ կերպով խառնակություն եմ մտցրնում Պետերբուրգի պրոլետարիատի այն մասի մեջ, վորը գնում էր ընտրությունների նախորդակին պառակտված մենչևիկների հետեից, և յես միշտ պետք է այդ կերպ վարվեմ պառակտված ժամանակ»¹:

Ի պատասխան այն կշտամբանքների, վոր Լենինի հարձակումները մենչևիկների հասցեյին վիրավորական են, Լենինը պատասխանեց. «Այդպիսի քաղաքական թշնամիներ վերաբերմամբ յես այն ժամանակ մղել եմ — և պառակտումը կրկնվելու ու դարձանալու դեպքում միշտ կմղեմ — կործանիչ պայքար»²: Այն, ինչի մասին Լենինն ակաստում էր, այդ միայն այն էր, վոր գտնվելով Պետերբուրգից դուրս, ինքը «բավարար չափով չողնեց պառակտված մենչևիկների ազդեցության տակից մասսաներին դուրս կորզելու այդ գործին...»:

Ամենից սուր հարցը, վորը կուսակցության համագումարում տարաձայնություններ առաջացրեց, այդ դեպի բուրժուա-

կան կուսակցություններն ունենալիք վերաբերմունքի հարցն էր: Յեւ այդ նշում է ընկեր Ստալինը «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Լոնդոնի համագումարը» իր հոդվածի մեջ, վորը տպագրվեց «Бакинский пролетарий» լրագրում համագումարից քիչ հետո, վորպես հաշվետվություն համագումարի մասին և մեծ դեր խաղաց համագումարի մասին ճիշտ ինֆորմացիա տալու գործում: Այն ժամանակ, յերբ մենչևիկները լողունգ էյին տվել «Լիբերալ բուրժուազիայի դիմափությամբ ամբողջ ուղղվելու հետ միասին ընդդեմ կառավարության», բոլշևիկների կուսակցությունն առաջ քաշեց «պրոլետարիատի դիմափությամբ հեղափոխական գյուղացիության հետ միասին ընդդեմ ցարիզմի և լիբերալ բուրժուազիայի» յողունգը:

Յեւ յեթե մենչևիկների տակտիկան տանում էր վոչ միայն դեպի համաձայնություն լիբերալների հետ, այլև դեպի լիբերալ բուրժուազիայի հեղեմունքան, ապա բոլշևիկների տակտիկան տանում էր դեպի կազետական բուրժուազիայի դեմ պայքար մղելու անհրաժեշտությունը, տանում էր կազետների հետ ամեն տեսակի համաձայնություն կայացնելու դեմ: Մենչևիկները ձախ բլոկի լենինյան տակտիկայի դեմ դեմագոգիկ առարկություններ և՛յին առաջ քաշում հալասարության վերաբերյալ եսերո-դուրազիական իդեաների ուսակցիոն և ուսուցիկ լինելու մասին: Լենինը դրան պատասխանում էր. այդ իդեաները ուսակցիոն և ուսուցիկ են սոցիալիզմի տեսակետից, բայց նրանք հեղափոխական են բուրժուական դեմոկրատիայի տեսակետից: «Մի մակարդակի վրա դնել լիբերալներին՝ տվյալ հեղափոխությունը խուզելու և մինչև վերջապահ, մինչև սահմանադրական միապետությունը, մինչև կազետական ազդարային ծրագիրը հասցնելու և այլ ձգտումները և գյուղացիների փորձերը՝ ուսակցիոն վոգով, ուսուցիստորեն իդեալականացնելու կալվածատերերին անհապաղ ջախջախելու, ամբողջ հողը խլելու, այդ հողն ամբողջութամբ բաժանելու իրենց ձգտումները — այս յերկուսը մի մակարդակի վրա դնել, նշանակում է բոլորովին թողնել վոչ միայն պրոլետարիատի հայեցակետը, այլև նույնիսկ հետեղական հեղափոխական դեմոկրատիզմի հայեցակետը»¹:

Լիբերալ բուրժուազիայի վերաբերմամբ Լենինն ու Ստալինն առանձնապես ընդգծում էյին նրա հակահեղափոխականությունը, վորը թույլ էի տալիս վորևէ համաձայնություն հեղափոխության այդ դալմաններին հետ: «Մենչևիկները չեն կարող խուսիս այդ դալմաններին արդեն դեկտեմբերին և դեկտեմբերին հետո յերես դարձրին պրոլետարիատից և դադարեցրին ամեն տեսակ աջակցություն նրա հեղափոխական պայքարին»²,

¹ Լենին, Յերկեր, հատ. XI, ուս. հրատ., էջ 221:

² Նույն տեղում:

¹ Լենին, Յերկեր, հատ. XI, ուս. հրատ., էջ 252—253:

² Նույն տեղում, էջ 88:

գրում էր Լենինը «Մենշևիկների տակտիկական պլատֆորմը» հոդվածի մեջ:

«Պարզ չի՞ արդյոք,—գրում էր ընկեր Ստալինն իր «Դեկտեմբերի նոթերը» մեջ,—վոր ուսական լիբերալ բուրժուազիան իրենից հակահեղափոխական ուժ է ներկայացնում, վորի գեմ հարկավոր է ամենամանրամասն պայքար մղել»:

Այս պատճառով Լենինն ու Ստալինը մերժում էին նաև «դեպից դեպ» կադեանների հետ համաձայնություն զայու մենշևիկ-բուրժուական իդեան: Լոնդոնի համագումարում Ռոզա Լուքսեմբուրգը մատնանչեց, թե «դեպից դեպ» գերմանական արտահայտությունը նույնահնչյուն է մի այլ արտահայտություն, այն է՝ «մի անկումից դեպի մյուսը» («Von Fall zum Fall»): Մենշևիկները տակտիկան հենց այդպիսի մի տակտիկա չեր, վորը տանում էր քաղաքական մի անկումից դեպի մյուսը, ամելի էս փաթեթարագուն է ամելի էս խոր անկում, մինչև վոր 1917 թվին մենշևիկները լիովին զրոյեցին հակահեղափոխություն զարչահող փոսը:

Լենինը՝ Լոնդոնի համագումարում յեղած այդ վեճերին սկզբունքային հակադաս նշանակություն էր տալիս: Նա ասում էր, վոր այն ժամանակը, վորն ընկած էր առաջին հեղափոխություն առաջնադուրս վերելքի է առաջնադուրս անկման միջև, «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ապագա պատմարանը պետք է անվանի տատանումների եպոխա»: Տատանում էր սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական, մենշևիկյան մասը: Այն վեճերը, վորոնք մղվում էին 1904—1905 թվականներին՝ հեղափոխության մեջ տարբեր դասակարգերի ունեցած դերի վերաբերյալ, գործնականորեն փորձվեցին 1905—1907 թվականներին:

«Այդ փորձարկումը փորձով ցույց տվեց յիբերայիցմին աջակցելու քաղաքականություն կատարյալ ֆիասկոն, այդ փորձարկումը հասցրեց բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի միակ հեղափոխական քաղաքականության ճանաչմանը, այն է՝ պայքարել հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու համար, միացնելով իրեն դեմոկրատական գյուղացիությունն ընդդեմ դավաճանական լիբերալիզմի»¹:

Լոնդոնի համագումարը վերջ դրե՞ց արդյոք մենշևիկների՝ դեպի լիբերալիզմ կատարած այդ տատանումներին: Լենինն ասում էր այն ժամանակ, վոր ուրիշ կյիներ այդ ասել, է նա դուրս յեկավ իրավացի, վորովհետև մենշևիկները հեռուն գնացին հեղափոխությանը դավաճանելու ուղիով, մի ուղի, վորը նրանք թեևակոխեցին դեռևս այն տարիներին, յերբ նրանք մասնակցում էին բոլշևիկների հետ միացյալ համագումարներին:

Լոնդոնի համագումարում պակաս սրությամբ չէր գրված նաև «բանվորական լայն կուսակցություն» վերաբերյալ մենշևիկյան իդեանի հարցը: «Բանվորական համագումարի իդեան,—կարդում ենք մենք ընկեր Ստալինի մոտ,—վերջրած նրա կոնկրետ տեսքով, հիմնովին կեղծ է, վորովհետև հենվում է վոչ թե փաստերի, այլ այն վոչ-ճիշտ դրույթի վրա, թե «մենք չունենք կուսակցություն»:

Բանն այն է, վոր մենք ունենք պրոլետարական կուսակցություն, նա բարձրաձայն խոսում է իր գոյություն մասին, նա չափազանց լուրջ կերպով իր մասին զգալ է տալիս պրոլետարիատի թշնամիներին—այդ շատ լայն գլխեն իրենք մենշևիկները,—է հենց այն պատճառով, վոր մենք արդեն ունենք այդպիսի կուսակցություն, հենց այդ պատճառով բանվորական համագումարի իդեան հիմնովին կեղծ է»¹:

Լենինը՝ բանվորական լայն կուսակցություն ստեղծելու անհրաժեշտություն մասին յեղած խոսակցություններն իսկ քաջատրում էր ամենից առաջ հեղափոխությունից որիսատեղական, ինտելիգենտական հոգնածությունը, մենշևիկական կուսակցության ոպորտունիստական ելույթամբ, կուսակցություն, վորը ձգտում էր բուրժուազիայի շահերին յենթարկել հեղափոխական բանվորական շարժումը: Վերջապես, Լենինը բանվորական համագումարի իդեանի առաջացման պատճառը համարում էր այն, վոր մենշևիկները չկարողացան յուրացնել այն նոր կազմակերպություններ շնանակությունը, վորոնք ստեղծվեցին բանվորական մասսայական շարժման աշխուժացման ժամանակաշրջանում, այն է՝ բանվորական դեպուտատների խորհուրդները, պրոֆմիությունները և այլն:

Սղծուկ դեր էր խաղում Լոնդոնի համագումարում «վոչ-ֆրակցիոն» Հուդա-Տրոցկին: Նա անհաջող կերպով փորձում էր կազմել կենտրոն: Չնայած այն բանին, վոր առանձին քվարկությունների ժամանակ յեհական, յատիշական սոցիալ-դեմոկրատների մի մասը, առանձնապես բուրժուականները, ցնորիստական դիրք էին զրավում, այս համագումարում կենտրոնի հենց իդեան դուրս յեկավ, Ստալինի խոսքերով ասած, «գեղեցիկ անակադություն»: Հուդա-Տրոցկին Լոնդոնի համագումարից ընչ հետո ցույց տվեց կուսակցության քայքայիչ, հակալենինյան, հակաբոլշևիկյան ոպոստոյան բյուկի կազմակերպչի իր իսկական դեմքը, յերբ նա, հուրախություն բանվոր դասակարգի թշնամիների, փորձեց Վիեննայի իր կրպակից տաշտակներով կեղտաջուր թափել բոլշևիկյան կուսակցության ու Լենինի գլխին:

Կուսակցության Լոնդոնի համագումարը մտավ բոլշևիզմի պատմության մեջ վորպես մի համագումար, վորտեղ առաջին հեղափոխության վերջերին համախմբվեցին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական բոլոր ուժերը: Յեթե նկա-

1 Լենին, Յերկեր, հատ. XI, ուս. հրատ., էջ 285:

1 Ի. Ստալին, ՌՍԴԲԿ Լոնդոնի համագումարը (Դեկտեմբերի նոթեր): Протоколы V съезда РСДРП, стр. XXX, Партиздат, 1935 г.

տի ունենանք, վոր Լոնդոնում յեղած Վ համագումարի և 1917 թվի Վ համագումարի միջև ընկած է մի ամբողջ տասնամյակ, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի հսկայական նշանակութիւն ունեցան Լոնդոնի համագումարի փորձումները հեղափոխութեան բոլոր կարևորագոյն հարցերի վերաբերյալ: Այս տասնամյակի կեսերին Պրազայի 6-րդ կոնֆերենցիան 1912 թվի ապրիլին վերականգնեց ցարիզմի հետապնդումների ու պառակտման հետեւիանքով քայքայված բոլշևիկյան դեկափար կենտրոնը և կազմակերպորեն ձևավորեց բոլշևիկյան կուսակցութեան ինքնուրույն գոյութիւնը: Վ և Վ համագումարները միջև ընկած այս տասնամյակում բանվոր դասակարգի շարքերում անհաշտ պայքար էր ընթանում մենշևիզմի դեմ, պայքար, փորին գլխավորում էին Լենինն ու Ստալինը:

Առանց այս պայքարի, առանց մենշևիզմի մինչև վերջի մերկացնելու չէր կարելի բանվոր դասակարգն ու աշխատավորների լայն մասսաները դուրս կորզել մենշևիզմի ու յիբերայիզմի աղ-դեցութեան տակից: Ահա թե ինչու այդքան փիթիարի սկզբունքային ու գործնական նշանակութիւն ունեցաւ մենշևիզմի դեմ մղվող լարված պայքարը, փորը կազմում էր կուսակցութեան համագումարում յեղած վեճերի հիմնական բովանդակութիւնը:

1907 թվին մենշևիզմի վրա տարած հաղթանակը բանվոր դասակարգի՝ հեղափոխական մարքսիզմ-լենինիզմի բոլոր թշնամիների վրա տարվելիք հետագա լիակատար հաղթանակի անհրաժեշտ պայմաններից մեկն էր:

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

Ի. ՍՏԱԼԻՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ¹

(ԳԵԼԵԳԱՏԻ ՆՈԹԵՐ)

Լոնդոնի համագումարը վերջացավ: Հակառակ լիբերալ գեր-շահներին՝ ամեն տեսակ վերգեթակներին և Կոնսերվատիվների ակնուկալութիւններին, համագումարը մեզ տվեց վոչ թե պառակտում, այլ կուսակցութեան հետագա համախմբում, ամբողջ Ռուսաստանի առաջավոր բանվորների հետագա միացում՝ մի անբաժան կուսակցութեան մեջ: Դա իսկական համառուսական միացուցիչ համագումար էր, վորովհետև այդտեղ առաջին անգամ ամենալայն և լրիվ կերպով ներկայացված էին մեր լեհական, բուլ-ղական ու լատիշ ընկերները, այդտեղ նրանք առաջին անգամ ակտիվորեն մասնակցեցին կուսակցական համագումարի աշխա-տանքին և, հետևաբար, առաջին անգամ իրենց կազմակերպու-թիւնների ճակատագիրն ալելի անմիջականորեն կապեցին ամ-բողջ կուսակցութեան ճակատագրի հետ: Այս խմաստով Լոնդոնի համագումարը զգալիորեն առաջ շարժեց Ռուսաստանի Սոցիալ-

¹ Ընկեր Ստալինի այս հոդվածը, վորը գրվել է 5-րդ համագումարից կարճ ժամանակ հետո, առաջին անգամ տպվել է 1907 թվականին, բոլշևիկյան «Բակինսկի Պրոլետարի» թերթի առաջին յերկու համարներում (հունիսի 20-ի № 1 և հուլիսի 10-ի № 2) «Կուրա Իվանովիչ» ստորագրութեամբ: Հոդ-վածի տակ գրված էր «Շարունակելի»: Սակայն հեղինակից «անկախ» պատ-ճառներով (լրտեսների՝ 1907 թվականի յերկրորդ կեսին ուժեղացած հետա-պնդումը, տպա՝ ձերբակալումն ու արքորը), հոդվածն այնպես էլ չավարտ-վեց: Խմբ.:

Դեմոկրատական Բանվորական Կուսակցութեան համախմբման ուսման ամբաստանման դրոշմը:

Այս և Լոնդոնի համագումարի առաջին և կարևոր արդյունքը:

Սակայն սրանով դեռ չէ սպառնում Լոնդոնի համագումարի նշանակությունը: Բանն այն է, վոր հակառակ նույն այդ լիբերալ զբոսականների ցանկության, համագումարը վերջացավ «բուլ-շեխիզմի» հաղթանակով, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակով՝ մեր կուսակցության ուղիորդության և թեկնածուների վրա, «մենշևիզմի» վրա: Բոլորին հայտնի յեն, իհարկե, մեր տարածաշրջանները՝ մեր հեղափոխության մեջ տարբեր դասակարգերի ու կուսակցությունների դերի և նրանց նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքի հարցի շուրջը: Հայտնի յեն նաև, վոր կուսակցության պաշտոնական կենտրոնը՝ իր կազմով մենշևիզիկյան, մի շարք յեղևթիներում հակասության մեջ եր ընկնում ամբողջ կուսակցության հետ:

Վերհիշեցեք թեկուզ կենտրոնական Կոմիտեյի առաջադրած պատասխանատու կազմակերպման միջոցների պատմությունը, մի լողունք, վորը կուսակցության կողմից մերթվեք առաջին Դումայի ժամանակ. նույն կենտրոնի՝ առաջին Դումայի ցրվելուց հետո «Դումայի նստաշրջանը վերսկսելու» լողունքի պատմությունը, մի լողունք, վորը նույնպես մերթվեք կուսակցության կողմից. առաջին Դումայի ցրվելու առթիվ ընդհանուր դրոշմադուլ կազմակերպելու կենտրոնի հայտնի կոչի պատմությունը, մի կոչ, վորը նույնպես մերթվեք կուսակցության կողմից... Անհրաժեշտ եր վերջ տալ այդ աննորմալ դրությունը: Իսկ դրա համար իր հերթին անհրաժեշտ եր ամփոփել ուղիորդական կենտրոնի վրա կուսակցության տարած փաստական հաղթանակները արդյունքը, հաղթանակներ, վոր լցնում են մեր կուսակցության ամբողջ անցյալ ստորվա ներքին զարգացման պատմությունը: Յեւ ահա, Լոնդոնի համագումարն ամփոփեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի այդ բոլոր հաղթանակները արդյունքը և, ամրացնելով նրա հպղթանակը, ընդունեց այդ սոցիալ-դեմոկրատիայի տակտիկան:

Հետևաբար, այսուհետև կուսակցությունը վարելու յեն սոցիալիստական պրոլետարիատի խիստ դասակարգային քաղաքականություն: Պրոլետարիատի կարմիր դրոշմն այլևս չի խոնարհվի լիբերալիզմի ճոռոմալուծների առջև: Պրոլետարիատին չա-

ղող ինտելիգենտական տատանումները մահացու հարված ստացան:

Այս և մեր կուսակցության Լոնդոնի համագումարի յերկրորդ՝ վոչ պակաս կարևոր արդյունքը:

Ամբողջ Խուսափող առաջավոր բանվորների փաստական միացումը, վորպես միասնական համառուսական կուսակցություն՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշմի տակ, այս և Լոնդոնի համագումարի իմաստը, այս և նրա ընդհանուր բնույթը:

Այժմ անցնենք համագումարի ավելի մանրամասն բնութագրմանը:


I

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԸ

Համագումարին ներկա ելին ընդամենը մոտ 330 դեկդատ: Նրանցից 302-ը կուսակցության ավելի քան 150 հազար անդամի ներկայացուցիչներ ելին վճռական ձայնի իրավունքով, մյուսները՝ խորհրդակցական: Ըստ Ֆրակցիաների բաշխվել ելին մոտավորապես հետևյալ կերպ (միմիայն վճռական ձայները)՝ 93 բուլշևիկ, 85 մենշևիկ, 54 բուլդակյան, 45 լեհ և 26 լատիշ:

Համագումարի անդամների հասարակական դրությունն տեսակետից (բանվորներ և վոչ-բանվորներ), համագումարը հետևյալ պատկերն եր ներկայացնում—ֆիզիկական աշխատանքի բանվորներ՝ ընդամենը 116 հոգի, գրասենյակային աշխատողներ վորում ֆիզիկական աշխատանքի բանվորներն ըստ Ֆրակցիաների բաշխվել ելին հետևյալ կերպ—բուլշևիկյան Ֆրակցիայում՝ 38 (36%), մենշևիկյան՝ 30 (31%), լեհերի մոտ՝ 27 (61%), լատիշների մոտ՝ 12 (40%), բուլդակյանների մոտ՝ 9 (15%): Իսկ պրոֆեսիոնալ հեղափոխականներն ըստ Ֆրակցիաների բաշխվել ելին հետևյալ կերպ—բուլշևիկյան Ֆրակցիայում՝ 18 (17%), մենշևիկյան՝ 22 (22%), լեհերի մոտ՝ 5 (11%), լատիշների մոտ՝ 2 (6%), բուլդակյանների մոտ՝ 9 (15%):

Մենք բոլորս ել «ապշած մնացինք» այս վիճակագրություններից: Ի՞նչպես: Մենշևիկներն այնքան շատ ելին աղաղակում մեր կուսակցության ինտելիգենտային կազմի մասին. նրանք գիշեր-ցերեկ հայհոյում ելին բուլշևիկներին ինտելիգենտ բառով,



նրանք սպառնում էին վնասել բոլոր ինտելիգենտներին կուսակցությանը, նրանք շարունակ վատաբանում էին պրոֆեսիոնալ հեղափոխականներին և հանկարծ՝ նրանց ֆրակցիայում շատ պակաս բանվորներ գտնվեցին, քան «ինտելիգենտ» բոլշևիկների մոտ: Նրանց մոտ շատ ավելի պրոֆեսիոնալ հեղափոխականներ գտնվեցին, քան բոլշևիկների մոտ: Բայց մենք մենչևիկյան աղաղակները բացատրում էինք նրանով, վոր «ում վոր տեղը վոր ցավում է, նա դրա մասին ել աղաղակում ե...»

Ավելի ևս հետաքրքիր են համագումարի կազմի վերաբերյալ թվերը՝ դելեգատները «տեղիտորիալ բաշխման» տեսակետից: Պարզվեց, վոր մենչևիկ դելեգատների մեծ խմբեր են ուղարկում գլխավորապես գյուղացիական և արհեստագործական շրջանները՝ Գուրիան (9 դելեգատ), Թիֆլիսը (10 դելեգատ), Մալո-ռոսական «Սպլիկա» գյուղացիական կազմակերպությունը (կարծեմ 12 դելեգատ), Բուսուրը (հսկայական մեծամասնությունը՝ մենչևիկյան) և, վորպես բացառություն, Դոնեցի ավազանը (7 հոգի): Այնինչ, բոլշևիկյան դելեգատները մեծ խմբեր են ուղարկում բացառապես խոշոր արդյունաբերական շրջանները՝ Պետերբուրգը (12 դելեգատ), Մոսկվան (13 կամ 14 դելեգատ), Ուրալը (21 դելեգատ), Իվանովո-Վոդնեսենսկը (11 դելեգատ), Լեհաստանը (45 դելեգատ):

Ակնհայտ է, վոր բոլշևիկները տակտիկան հանդիսանում է խոշոր-արդյունաբերական պրոլետարների տակտիկան, այն ուսուցողների տակտիկան, վորտեղ դասակարգային հակասություններն առանձնապես պարզորոշ են և դասակարգային պայքարն առանձնապես սուր է: Բոլշևիկներն իսկական պրոլետարների տակտիկան է:

Մյուս կողմից, վոչ պակաս ակներև է նաև այն, վոր մենչևիկները տակտիկան հանդիսանում է առավելապես արհեստագործական բանվորների և գյուղացիական կիսապրոլետարների տակտիկան, այն շրջանների տակտիկան, վորտեղ դասակարգային հակասությունները վոչ բոլորովին պարզ են և դասակարգային պայքարը սքողված է: Մենչևիկները պրոլետարիատի կուսակցության տարրերի տակտիկան է:

Այդ են ասում թվերը:

Յեվ այդ դժվար է հասկանալ. չի կարելի Լոժի, Մոսկվայի կամ Իվանովո-Վոդնեսենսկի բանվորների մեջ լրջորեն խոսել հենց այն լիբերալ բուրժուազիայի հետ բոլի կազմելու մասին, վորի

անդամները կատաղի պայքար են մղում այդ բանվորների դեմ, հաճախ «պատժելով» նրանց մասնակի արձակումներով և մասնաշաղկապ լուսավորումով: Այդտեղ մենչևիկները համակրանք չի գտնի իր համար, այդտեղ հարկավոր է բոլշևիկները, անհաշտ պրոլետարական դասակարգային պայքարի տակտիկան: Յեվ, ընդհանրապես, չափազանց դժվար է դասակարգային պայքարի գաղափար պատմաստել Գուրիայի գյուղացիներին կամ Շլիսով-սկու վորեն արհեստավորի, վորոնք չեն զգում դասակարգային պայքարի սուր, սիստեմատիկ հարվածները և վորոնք այդ պատճառով սիրահոփար կերպով ամեն տեսակ համաձայնություններ չեն գտնում «ընդհանուր թշնամու» դեմ: Այդտեղ առայժմ բոլշևիկները հարկավոր չեն, այդտեղ հարկավոր է մենչևիկները, վորովհետև այդտեղ ամեն ինչ հազեցած է համաձայնությունների ու կոմպրոմիսների միջոցով:

Պակաս հետաքրքիր է համագումարի կազմի ազդեցությունների տեսակետից: Վիճակագրությունը ցույց է տվել, վոր մենչևիկյան ֆրակցիայի մեծամասնությունը կազմում են հրեաները (չհաշված, իհարկե, բուդականներին), ապա գալիս են վրացիները, հետո՝ ուսաները: Բայց դրա փոխարեն բոլշևիկյան ֆրակցիան հսկայական մեծամասնությունը կազմում են ուսաները, ցիպի հսկայական մեծամասնությունը կազմում են ուսաները, ապա գալիս են հրեաները. (չհաշված, իհարկե, լեհերին ու լատիշներին), ապա՝ վրացիները և այլն: Այս առթիվ բոլշևիկներին մեկը կատակով ասաց (կարծեմ ընկեր Ալեքսիեյի), թե մենչևիկները հրեական ֆրակցիա չեն, բոլշևիկները՝ իսկական ուսական, հետևարար, չեն խանդարի, չեթ մենք, բոլշևիկներն, ջարդ սարքեյինք կուսակցության մեջ:

Իսկ ֆրակցիաների այդպիսի կազմը դժվար է բացատրել բոլշևիկների ոջախ են հանդիսանում գլխավորապես խոշոր-արդյունաբերական ուսաները, զուտ ուսական ուսաները, բացի Լեհաստանից, մինչդեռ մենչևիկյան ուսաները, մանր արտադրության ուսաները, միևնույն ժամանակ հանդիսանում են հրեաների, վրացիների և այլ ուսաներ:

Ինչ վերաբերում է համագումարում ուրվագծված հոսանքներին, ապա պետք է ասել, վոր համագումարը ձևականորեն հինգ ֆրակցիաների բաժանելը (բոլշևիկներ, մենչևիկներ, լեհեր և այլն) վորոշ, ճիշտ է՝ անշան, ուժ պահպանեց միմիայն մինչև սկզբունքային բնույթ կրող հարցերի քննարկվելը (վոչ-պրոլետարական կուսակցությունների, բանվորական համագումարի

հարցը և այլն)։ Սկզբունքային հարցերից սկսած՝ ձևական խմբավորումը փաստորեն դեն գցվեց և քվեարկությունները ժամանակ համագումարը սովորաբար բաժանվում էր յերկու մասի՝ բոլշևիկների և մենշևիկների։ Այսպես կոչված կենտրոն կամ ճահիճ չկար համագումարում։ Տրոցկին «դեդեյիկ անպետքություն» դուրս յեկավ։ Ընդվորում բոլոր լեհերը վորոշակի հարել էին բոլշևիկներին։ Լատիշների հսկայական մեծամասնությունը նույնպես վորոշակիորեն պաշտպանում էր բոլշևիկներին։ Բուկարը, վորը փաստորեն, իր դելեգատները հսկայական մեծամասնությամբ, միշտ պաշտպանում էր մենշևիկներին, ձևականորեն վերին աստիճանի յերկմիտ քաղաքականություն էր վարում, վորը մի կողմից ժպտա, մյուս կողմից հուզում էր առաջանում։ Ընկեր Ռոդա Լուքսեմբուրգը դեղարվեստականորեն, դիպուկ կերպով, բնորոշեց Բուկարի այդ քաղաքականությունը, ասելով, թե Բուկարի քաղաքականությունը մասսաների վրա ազդող հասուն քաղաքական կազմակերպության քաղաքականություն չէ, թե դա չարչիների քաղաքականություն է, վորոնք մշտնջենական ակնկալությամբ դիտում և մշտնջենապես սպասում են հուսարով, վոր թերևս վաղը չաքարը կեժանառա։ Բուկարականներից բոլշևիկներին պաշտպանում էին միմիայն 8—10 դելեգատ, այն ել վոչ միշտ։

Ընդհանուր առմամբ գերակշռությունը, և բավականաչափ զգալի գերակշռությունը, բոլշևիկների կողմն էր։

Այսպիսով, համագումարը բոլշևիկյան էր, թեպետ վոչ ցայտուն բոլշևիկյան։ Մենշևիկյան բանաձևերից անցավ միմիայն պարտիզանական յերույթների վերաբերյալ բանաձևը, այն ել բոլորովին պատահաբար։ Բոլշևիկներն այս անգամ մարտը չընդունեցին, ավելի ճիշտ՝ չուզեցին այն մինչև վերջը հասցնել, պարզապես ցանկանալով «գեթ մի անգամ ուրախացնել ընկ. մենշևիկներին...»

II

ՈՐԱԿԱՐԳԸ։ ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ։ ԴՈՒՄԱՅԻ
ՖՐԱԿՅԻՄՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Համագումարում յեղած քաղաքական հոսանքների տեսակետից, համագումարի աշխատանքները կարելի չէ բաժանել յերկու մասի։

Առաջին մասը՝ վիճարանություններ ձևական հարցերի շուրջը, ինչպես՝ համագումարի որակարգը, Կենտկոմի հաշվետվությունները և Դումայի Փրակցիայի հաշվետվությունը, հարցեր, վորոնք քաղաքական խոր իմաստ ունեն, բայց կապված են կամ մտքի հետ, թե՛ «չլինի» թե վիրավորանք հասցվի» այս կամ այն Փրակցիային, «չլինի» թե պառակտում առաջանա», վորոնք և այդ պատճառով կոչվում են ձևական հարցեր։ Համագումարի այս մասն անցավ ամենից ավելի բուռն թափով և կլանեց ժամանակի մեծագույն մասը։ Յեվ այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր սկզբունքի նկատառումները հետ ելին մղվում «մորալի» նկատառումներով («չլինի» թե վիրավորանք հասցվի»), հետևաբար խիստ վորոշակի խմբավորումներ չեղին ստեղծվում, միանգամից չեր կարելի գլխի ընկնել, թե «ո՞վ է հաղթի», և Փրակցիաները, հույս ունենալով իրենց հետևից տանելու «չեղոր-կորեկտներին», անձնատուր ելին լինում կատարի պայքարի՝ գերակշռման համար։

Յերկրորդ մասը՝ վիճարանություններ սկզբունքային հարցերի շուրջը, ինչպես՝ վոչ-պրոլետարական կուսակցություններ, բանվորական համագումարի հարցը և այլն։ Այստեղ արդեն «մորալի» նկատառումներ չկային։ ստեղծվում էին վորոշակի խմբավորումներ՝ ըստ խիստ վորոշ սկզբունքային հոսանքների, Փրակցիաների միջև ուժերի փոխհարաբերությունը պարզվում էր միանգամից, և այդ պատճառով համագումարի այդ մասն ամենից ավելի հանգիստ ու բեղմնավոր էր, — բացահայտ ապացույց հոգուտ այն բանի, վոր վիճարանությունների սկզբունքայնությունը համագումարի աշխատանքի արդյունավետության ու հանդատության լավագույն յերաշխիքն են։

Այնչենք համագումարի աշխատանքի առաջին մասի համառոտ բնութագրմանը։

Ընկեր Պլեխանովի ճառից հետո, վորը բացեց համագումարը և իր ճառում նշեց, թե անհրաժեշտ է «դեպքից-դեպք» համաձայնության գալ բուրժուական հասարակության «պրոգրեսիվ տարրերի» հետ, համագումարն ընտրեց նախագահություն՝ հինգ հոգուց բաղկացած (մեկական՝ Փրակցիաներից), ընտրեց մանդատային հանձնաժողով և անցավ որակարգի մշակմանը։ Գնորոշ է, վոր այս համագումարում, ինչպես և անցյալ տարվա միացուցիչ համագումարում, մենշևիկներն ամենակատարի կեր-

սոցիալ-դեմոկրատները դուժալական Ֆրակցիային՝ յենելով ուղղիցիայի միասնականութեան շահերից, կադետներին ներգրավելու շահերից՝ Դուժայի դիմումի մեջ չմտցնել մեր ազգաբային ծրագրի հայտնի կետը՝ ամբողջ (կարժաժատիրական) հողը բռնագրավելու մասին, այլ սահմանափակել պարզապես հայտարարելով հողի ոտարման մասին, առանց վերապահման՝ փրկագնով թե առանց փրկագնի:

Մի լա՛վ մտածեք՝ կուսակցութեան Կենտկոմն առաջարկում էր դուրս գցել կուսակցութեան ծրագրի՝ հողի բռնագրավման վերաբերյալ կարեւորագույն կետը: Կենտկոմը խախտում էր կուսակցութեան ծրագիրը: Կենտկոմը վորպես ծրագիր խախտող՝ չարո՞ղ էր պատկերացնել ձեզ այս չտեսնված խայտառակութեանը:

Այնուհետեւ: Փոխանակ թեկուզ միացուցիչ համագումարի դեքեկտիվները կենսագործելու, փոխանակ Դուժայում կուսակցութեանների պայքարը սիստեմատիկաբար խորացնելու՝ Դուժայից դուրս դասակարգելի մղած պայքարում ավելի մեծ դիտակցականութուն մտցնելու նպատակով, փոխանակ պրոլետարիատի խստորեն դասակարգային անկախ քաղաքականութեանն իրականացնելու, — Կենտկոմը լողունդներ առաջադրեց կադետային պատասխանատու մինիստրութեան մասին, «Դուժայի սեսիան վերսկսելու մասին», «հանուն Դուժայի, ընդդէմ կաթարիլայի» լողունդներ, և այլն և այլն, վորոնք կոծկում են կուսակցութեան պայքարը Դուժայում, կոծկում են դասակարգային հակասութեանները Դուժայից դուրս, վորոնք ջնջում են ամեն մի սահմանագիծ պրոլետարիատի մարտական քաղաքականութեան և լիբերալ բուրժուազիայի համաձայնողական քաղաքականութեան միջև, վորոնք առաջինը հարմարեցնում են յերկրորդին: Յեւ յերր կենտրոնական որդանի, հետևաբար Կենտրոնական Կոմիտեյի անդամներից մեկը՝ ընկեր Պլեխանովը ավելի հեռու դնաց կադետներին հետ համաձայնութեան դալու ճանապարհով և կուսակցութեանն առաջարկեց բոլոր կազմել լիբերալ բուրժուազիայի հետ, դեն գցելով Սահմանագիր ժողովի լողունդն ու առաջադրելով լիբերալ բուրժուազիայի համար ընդունելի «լիիշխան Դուժայի» լողունդը, — Կենտկոմը վոչ միայն չէր բողոքում ընկեր Պլեխանովի՝ կուսակցութեանը խայտառակող յերույթի դեմ, այլ նույնիսկ համաձայն էր դրա հետ, ի դեպ՝ համարձակութեան չունենալով պաշտոնապես իր համաձայնութեանն արտահայտելու:

Ահա թե ինչպէս էր խախտում կուսակցութեան Կենտկոմը պրոլետարիատի անկախ դասակարգային քաղաքականութեան և միացուցիչ համագումարի վորոշումների տարրական պահանջները:

Մի Կենտկոմ, վոր մթազնում է պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցութեանը, մի Կենտկոմ, վորը պրոլետարիատի քաղաքականութեանը յենթարկում է լիբերալ բուրժուազիայի քաղաքականութեանը, մի Կենտկոմ, վորը պրոլետարիատի դրոշը խոնարհում է կադետական լիբերալիզմի շառլատանների առջև, — ահա թե վորտեղ հասցրին մեզ մենչեիկյան ուղիք-տունիստները:

Մենք եւ չենք ասում, թե ինչպէս Կենտկոմը վոչ միայն չէր պահպանում կուսակցութեան միասնութեանն ու կարգապահութեանը, այլ սիստեմատիկաբար խախտում էր այդ՝ իր վրա վերցնելով Պետերբուրգի կազմակերպութեան պառակտման նախաձեռնութեանը:

Մենք չենք ուզում, ծանրանալ նաև այն բանի վրա, վոր Կենտկոմը չէր միացնում կուսակցութեան աշխատանքը, դա ըստ ինքյան պարզ է:

Ինչո՞ւ է բացատրվում այս ամենը, Կենտկոմի այս բոլոր սխալները: Իհարկե, վոչ թե Կենտկոմում նիստեր ունեցող «սոսկալի» անձնավորութեաններով, այլ նրանով, վոր այն ժամանակ Կենտկոմը լցրած մենչեիզմը անընդունակ էր կուսակցութեանը դեկավարելու: Նա վերջնականապես սնանկացել է, վորպես քաղաքական հոսանք: Այդ տեսակետից Կենտկոմի ամբողջ պատմութեանը հանդիսանում է մենչեիզմի տապալման պատմութեան: Յեւ յեր ընկեր մենչեիկները մեզ կշտամբում են, ասելով, թե մենք «խանդարում եյինք» Կենտկոմին, մենք նրան «ձանձրացնում եյինք» և այլն, և այլն, մենք չենք կարող այդ բարոյախոսող ընկերներին չպատասխանել՝ այո՛ւ ընկերներ, մենք «խանդարում եյինք» Կենտկոմին մեր ծրագիրը խախտելու, մենք «խանդարում եյինք» նրան պրոլետարիատի տակտիկան լիբերալ բուրժուազիայի ճաշակին հարմարեցնելու և այսուհետև ևս խանդարելու յենք, վորովհետև այդ մեր սրբազան պարտականութեանն է...

Մոտավորապես այսպես խոսեց ընկեր Ռյադովովը:

Վիճարանութեաններից պարզվեց, վոր ընկերների մեծ մասը, նույնիսկ միջանի բունդականներ, պաշտպանում են ընկեր Ռյադովովի տեսակետը: Յեւ յեր յենթադասակարգային չանցավ

բուլլեիկներէ բանաձեւը, վորը նշում եր Կենտկոմի սխալները, ապա դրա պատճառն այն եր, վոր ընկերներէ վրա մեծապէս ազդում եյին հետեւյալ նկատառումները՝ «չլինի՞ թե սրտակտում առաջանա»։ Չանցալ, իհարկէ, նաև մենչեիկյան բանաձեւը՝ Կենտկոմին վստահություն հայանելու մասին։ Անցալ պարզապէս հերթական դործերին անցնելու տեսակետը՝ առանց Կենտկոմի դործունեությունը գնահատելու...

Դուժայի Ֆրակցիայի հաշվետվության հարցի շուրջը բացված վիճարանություններն ընդհանուր առմամբ ներկայացնում եյին նախորդ հարցի շուրջը տեղի ունեցած վիճարանությունների կրկնությունը։ Յեւ այդ հասկանալի չե՝ Դուժայի Ֆրակցիան դործում եր Կենտկոմի ուղղակի դեկլարությամբ և, բնականորեն, Կենտկոմի քննադատումը կամ սրաչափանումը միևնույն ժամանակ հանդիսանում եր Դուժայի Ֆրակցիայի քննադատում կամ պաշտպանում։

Հետաքրքիր եր յերկրորդ գեկուցողի՝ ընկեր Ալեքսինսկու այն դիտողությունը (առաջին գեկուցողն եր ընկեր Ծերեթելին), թե Դուժայի՝ իր մեծամասնությամբ մենչեիկյան Ֆրակցիայի լողունգը՝ Դուժայում ուղղիցիայի միասնության մասին, ուղղիցիան չպառակտելու և կադետների հետ միասին ընթանալու անհրաժեշտության մասին—այս մենչեիկյան լողունգը, ընկեր Ալեքսինսկու բարահայտությամբ, կատարյալ պարտություն կրեց Դուժայում, վորովհետև ամենակարևոր հարցերում, ինչպես՝ բյուջէի, բանակի և այլն հարցերում, կադետներն ընթանում եյին Ստոլիպինի հետ միասին, և մենչեիկ սոցիալ-դեմոկրատները հարկադրված եյին, գլուղացիների պատգամաւորների հետ ձեռք-ձեռքի տված, պայքար մղել կառավարության ու կադետների դեմ։ Մենչեիկները պետք ե դործնականորեն արձանագրելին իրենց դիրքի տապալումը և անցկացնելին Դուժայում բուլլեիկներէ այն լողունգը, թե անհրաժեշտ ե գլուղացիների դեբեզատներին տանել մեզ հետ՝ աջերի և կադետների դեմ մղվող պայքարում։

Վոչ պակաս հետաքրքիր ե լեհ ընկերների այն դիտողությունը, թե Դուժայի Ֆրակցիայի համար անթույլատրելի չե գնալ ընդհանուր ժողովի՝ նարոդովականների հետ, Լեհաստանի այդ սև-հարյուրյակայինների հետ, վորոնք քանիցս սոցիալիստների ջարդ են կազմակերպել Լեհաստանում և շարունակում են

կազմակերպել այժմ։ Կովկասյան մենչեիկներէ յերկու պարագլուխները մեկը մյուսի հետեւից դրան պատասխանեցին, թե Դուժայի Ֆրակցիայի համար կարևոր չե այն, թե ինչ են անում կուսակցություններն իրենց մոտ տանը, այլ այն, թե իրենց ինչպես են պահում նրանք Դուժայում, իսկ նարոդովականները Դուժայում իրենց քիչ թե շատ լիբերալ են պահում։ Դուժայ եր գալիս, վոր կուսակցություններին պետք ե ընտրագրել վոչ թե այն բանով, թե ինչ են անում նրանք Դուժայից դուրս, այլ այն բանով, թե ինչ են խոսում նրանք Դուժայում։ Ուղարտուելով դրանից ավելի հեռու չեք կարող գնալ...

Հոնտոբնների մեծամասնությունը համաձայն եր ընկեր Ալեքսինսկու տեսակետին, բայց այնուամենայնիվ վոչ մի բանաձեւ չընդունվեց նաև այդ հարցի շուրջը, դարձյալ նույն նկատառումներով՝ «չվիրավորել»։ Հետաձգելով բանաձեւի հարցը, համագումարն ուղղակի անցալ հաջորդ հարցին։

III

ՎՈՉ-ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձեական հարցերից մենք անցնում ենք սկզբունքային հարցերին, մեր տարածայնությունների հարցերին։

Մեր տակտիկական տարածայնությունների հարցերը՝ մեր հեղափոխության հալանական ճակատագրի և այդ հեղափոխության մեջ ուսական հատարակության տարբեր դասակարգերի ու կուսակցությունների ունեցած դերի հարցերն են։ Վոր մեր ու կուսակցությունների բուրժուական ե, վոր դա պետք ե վեջնա հեղափոխությունը բուրժուական ե, վոր դա պետք ե վեջնա ճորտատիրական և վոչ թե կապիտալիստական կարգերի ջախջախումով, վոր դա կարող ե պատկերել միայն դեմոկրատական խումով, վոր դա կարող ե պատկերել միայն հանրապետությամբ,—այս բանում, թվում ե, վոր բոլորը համաձայն են մեր կուսակցության մեջ։ Այնուհետև, վոր մեր հեղափոխությունն ընդհանուր առմամբ ու ամբողջապէս ընթանում ե դեպի վերելք և վոչ թե դեպի ցած, և վոր մեր խնդիրն ե հանդիսանում վոչ թե հեղափոխության «լիվիդացիան», այլ այն միևնույն վերջը հասցնելը,—այս բանում նույնպես, համենայն դեպս ձեականորեն, բոլորը համաձայն են, քանի վոր մենչեիկ-դեպս ձեականորեն, դեռ վոչ մի տեղ չեն հայտարարել հաները, վորպէս Ֆրակցիա, դեռ վոչ մի տեղ չեն հայտարարել հակառակը։ Բայց ի՞նչ կերպ միևնույն վերջը հասցնել մեր հեղափոխությունը։ Ի՞նչ դեր ունեն պրոլետարիատը, գլուղացի-

թյունը, լիբերալ բուրժուազիան այդ հեղափոխության մեջ: Պայքարող ուժերի խնչարիսի զուգակցման դեպքում կարելի կլինի մինչև վերջը հասնել ընթացիկ հեղափոխությունը: Ո՛ւմ հետ գնալ, ո՞ւմ հարվածել և այլն, և այլն:

Ահա թե վորտեղից են սկսվում մեր տարածաշուկայները:

Մենչևիկները կարծիք: Քանի վոր մեր հեղափոխությունը բուրժուական է, ապա միայն բուրժուազիան էլ հենց կարող է լինել հեղափոխության առաջնորդը: Բուրժուազիան յեղելն Փրանսիայում տեղի ունեցած մեծ հեղափոխության առաջնորդը, նա յեղել է Ֆելլոպայի մյուս պետություններում տեղի ունեցած հեղափոխությունները, նա էլ պետք է լինի առաջնորդը նաև մեր ուսսական հեղափոխության մեջ: Պրոլետարիատը հեղափոխության գլխավոր մարտիկն է, բայց նա պետք է ընթանա բուրժուազիայի հետևից և առաջ մղի նրան: Գյուղացիությունը նույնպես հեղափոխական ուժ է, բայց նրա մեջ չափազանց շատ ունակելուն բան կա, ուստի և պրոլետարիատը շատ ավելի սակավ դեպքում առիթ կունենա հանդես գալու նրա հետ համատեղ, քան թե լիբերալ-դեմոկրատական բուրժուազիայի հետ: Բուրժուազիան պրոլետարիատի ավելի հուսալի դաշնակիցն է հանդիսանում, քան թե գյուղացիությունը: Լիբերալ-դեմոկրատական բուրժուազիայի շուրջը, վորպես առաջնորդի շուրջը, պետք է համախմբվեն բոլոր պայքարող ուժերը: Ուստի մեր վերաբերմունքը դեպի բուրժուական կուսակցությունները պետք է վորոշվի մոչ թե հեղափոխական դրույթով—գյուղացիության հետ միասին ընդդեմ կառավարության ու լիբերալ բուրժուազիայի՝ պրոլետարիատի գլխավորությամբ,—այլ ուպրոտունիստական դրույթով—ամբողջ ուղղիցիայի հետ միասին ընդդեմ կառավարության՝ լիբերալ բուրժուազիայի գլխավորությամբ: Այստեղից լիբերալների հետ համաձայնությունների տակտիկան:

Այս է մենչևիկների կարծիքը:

Բուլշևիկները կարծիք: Մեր հեղափոխությունն իսկապես բուրժուական է, բայց այդ դեռ չի նշանակում, վոր նրա առաջնորդը կհանդիսանա մեր լիբերալ բուրժուազիան: Նժող դարում Փրանսական բուրժուազիան Փրանսական հեղափոխության առաջնորդն էր, բայց ինչո՞ւ: Վորովհետև Փրանսական պրոլետարիատը թույլ էր, նա հանդես չեր գալիս ինքնուրույն կերպով, չեր առաջադրում իր դասակարգային պահանջները, չունեի մոչ դա-

սակարգային դիտակցություն, մոչ կադմակերպություն, նա այն ժամանակ ընթանում էր բուրժուազիայի պոչից, և բուրժուազիան նրան ոգտադրո՞ւմ էր վորպես գենդ իր բուրժուական նպատակների համար: Ինչպես տեսնում եք, բուրժուազիան այն ժամանակ դաշնակցի կարեք չեր դրում՝ հանձին ցարական իշխանության ընդդեմ պրոլետարիատի: Պրոլետարիատն ինքը նրա դաշնակց—ծառան էր, ուստի և բուրժուազիան այն ժամանակ կարող էր լինել հեղափոխական, ընթանալ նույնիսկ հեղափոխության գլուխն անցած: Միանգամայն այլ բան է նկատվում մեզ մոտ Ռուսաստանում: Ռուսական պրոլետարիատին բնավ չի կարելի անվանել թույլ. նա արդեն մի քանի տարի յե, ինչ հանդես է գալիս կատարելապես ինքնուրույն կերպով, առաջադրելով իր դասակարգային պահանջները. նա բավականաչափ զինված է իր դասակարգային ինքնադիտակցությամբ, վորպեսզի հասկանա իր շահերը. նա համախմբված է իր կուսակցության մեջ. նա ունի շահերը. նա համախմբված է իր կուսակցություն՝ իր ծրագրով ու Ռուսաստանում ամենաուժեղ կուսակցություն՝ իր ծրագրով ու տակտիկական—կադմակերպական սկզբունքներով. այդ կուսակցության գլխավորությամբ նա արդեն մի շարք վայրեր հաղթանակներ է տարել բուրժուազիայի վրա... Կարո՞ղ է արդյոք պրոլետարիատը բավարարվել լիբերալ բուրժուազիայի պոչի դերով, այդ բուրժուազիայի ձեռքում խոճուկ գենդ լինելու դերով: Կարո՞ղ է արդյոք, պետք է արդյոք նա ընթանա այդ բուրժուազիայի հետևից, նրան դարձնելով իր առաջնորդը: Կարո՞ղ է արդյոք նա չլինել հեղափոխության առաջնորդը: Բայց տեսեք, թե ինչ է կատարվում մեր լիբերալ բուրժուազիայի բառեսեք, թե ինչ է կատարվում մեր լիբերալ բուրժուազիայի հեղափոխականում. մեր բուրժուազիան, վախեցած պրոլետարիատի հեղափոխականությունից, փոխանակ ընթանալու հեղափոխության գլուխն անցած, նետվում է հակահեղափոխության դերից, դաշինքի մեջ է մտնում նրա հետ՝ ընդդեմ պրոլետարիատի: Իսկ նրա կուսակցությունը, կադետների կուսակցությունը, բացեիքաց, ամբողջ աշխարհի աչքի առաջ համաձայնության մեջ է մտնում Ստոլիպինի հետ, թեի է քվեարկում բյուջեյին ու բանակին՝ հոգուտ ցարիզմի, ընդդեմ ժողովրդական հեղափոխության: Պարզ չե՞ արդյոք, վոր ուսսական լիբերալ բուրժուազիան իրենից ներկայացնում է հակահեղափոխական ուժ, վորի դեմ հարկավոր է մղել ամենամոտոք պատերազմ: Յեվ իրավացի չե՞ր արդյոք ընկ. Կուցկին, ասելով, թե այնտեղ, վորտեղ պրոլետարիատը հանդես է գալիս ինքնուրույն կերպով, բուրժուազիան դադարում է հեղափոխական լինելուց...

Յեւլ աշապես. ուսումնական լիբերալ բուրժուազիան հակահեղափոխական է, նա չի կարող լինել հեղափոխութեան վոչ շարժիչ ուժը, վոչ էլ, առաջել ևս, առաջնորդը. նա հանդիսանում է հեղափոխութեան վոխերով թշնամին, և նրա դեմ պետք է համառ պայքար մղել:

Մեր հեղափոխութեան միակ առաջնորդը, վորը շահագրգռոված է և կարող է Ռուսաստանի հեղափոխական ուժերն իր հետեւից դրոճի տանել ցարական ինքնակալութեան դեմ—հանդիսանում է պրոլետարիատը: Միայն պրոլետարիատն իր շուրջը կհամախմբի յերկրի հեղափոխական տարրերին, միայն նա մինչև վերջը կհասցնի մեր հեղափոխությունը: Սոցիալ-դեմոկրատիայի խնդիրն է հանդիսանում անել այն ամենը, ինչ հնարավոր է, պրոլետարիատին հեղափոխութեան առաջնորդի դերին նախապատրաստելու համար:

Այս է բոլշևիկյան տեսակետի առանցքը:

Այն հարցին, թե ապա ո՞վ կարող է պրոլետարիատի հուսալի դաշնակիցը հանդիսանալ մեր հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու դործում, բոլշևիկները պատասխանում են. պրոլետարիատի միակ, քիչ թե շատ հուսալի և ուժեղ դաշնակիցը հանդիսանում է հեղափոխական գյուղացիությունը: Վոչ թե դավաճան լիբերալ բուրժուազիան, այլ հեղափոխական գյուղացիությունը պրոլետարիատի հետ միասին կկռվի ճորտատիրական կարգերի բոլոր հիմքերի դեմ:

Մրան համապատասխան, մեր վերաբերմունքը դեպի բուրժուական կուսակցությունները պետք է վորոշվի հետևյալ դրույթով—հեղափոխական գյուղացիութեան հետ միասին ընդդէմ ցարիզմի ու լիբերալ բուրժուազիայի՝ պրոլետարիատի դրոյթաւորութեամբ: Այստեղից էլ բղխում է կազեմական բուրժուազիայի հեղեմոնիայի (առաջնորդություն) դեմ պայքարելու անհրաժեշտությունը և, հետևապես, կազեմների հետ համաձայնություններ կնքելու անթույլատրելիությունը:

Այս է բոլշևիկների կարծիքը:

Այս յերկու դիրքերի շրջանակներումն էյին պտտւում դեկուցողների, Լենինի ու Մարտինովի և մյուս բոլոր հոետորների ճառերը:

Ընկ. Մարտինովը վերջնականապես «խորացրեց» մենշևիկների տեսակետը, կատեգորիկ կերպով ժխտելով պրոլետարիատի հեղեմոնիայի թույլատրելիությունը և նույնպես կատեգորիկ

կերպով պաշտպանելով կազեմների հետ բոլի հաստատելու դադարը:

Մյուս հոետորները, նրանց հսկայական մեծամասնությունը, արտահայտվեցին բոլշևիկյան դիրքի վորդով:

Հատկապես հետաքրքիր են ընկ. Ռոդա Լուքսեմբուրգի ճառերը, վորը համադրւմարին վորջույն հաղորդեց դերմանական սոցիալ-դեմոկրատիայի անունից և զարգացրեց մեր դերմանական ընկերների տեսակետը մեր տարածայնությունների վերաբերյալ: (Մենք այստեղ հարակցում ենք Ռ. Լ-ի յերկու ճառերը, վորոնք արտասանվել են զանազան ժամանակներում): Միանգամայն համաձայնելով բոլշևիկների հետ պրոլետարիատի՝ վորպես հեղափոխութեան առաջնորդի՝ դերի, լիբերալ բուրժուազիայի՝ վորպես հակահեղափոխական ուժի՝ դերի և այլ հարցերում, Ռ. Լուքսեմբուրգը քննադատում էր մենշևիզմի լիզերներին՝ Պլեխանովին ու Ակսելրոդին, անվանելով նրանց ոպորտունիստներ և նրանց դիրքը համեմատելով ժորեսխատների դիրքի հետ՝ Փրանսիայում: Յես դիտեմ,—ասում էր Լուքսեմբուրգը,—վոր բոլշևիկները ևս ունեն վորոշ շեղումներ, տարրերնակություններ, ավելորդ հաստատակամություն, բայց յես նրանց կատարելապես հասկանում եմ և արդարացում: Ըի կարելի չլինել հաստատակամ՝ տեսնելով մենշևիկյան ոպորտունիզմի հեղհեղուկ, մաժուցիկ մասսան: Նույն այդ ավելորդ հաստատակամությունը նկատւում էր դեդիստների մոտ՝ Փրանսիայում, վորոնց լիզերը, ընկեր Գեդը, հայտնի ընտրական աֆիշի մեջ հայտարարում էր, թե՛ «վոչ մի բուրժուա թոդ չհամարձակվի թեք քվեարկել ինձ, վորովհետև յես պաւլումենտում պաշտպանելու յեմ միայն պրոլետարների շահերը՝ ընդդէմ բոլոր բուրժուաների»: Յեւլ չնայած այդ բանին, չնայած այսխտություններին, մենք, դերմանական սոցիալ-դեմոկրատներս, միշտ գեդիստների կողմն ենք կանգնած յեղել՝ մարքսիզմի դավաճանների դեմ, ժորեսխատների դեմ նրանց մղած պայքարում: Նույնը պետք է ասել բոլշևիկների վերաբերյալ, վորոնց մենք, դերմանական սոցիալ-դեմոկրատներս, կպաշտպանենք ոպորտունիստ մենշևիկների դեմ նրանց մղած պայքարում...

Այսպես էր ասում, մոտավորապես, ընկեր Ռ. Լուքսեմբուրգը:

Ել ավելի հետաքրքիր է այն հուշակալոր նամակը, վոր ուղարկել է համադրւմարին Գերմանական Սոցիալ-Դեմոկրատա-

Վրան կուսակցութեան կենտրոնական կոմիտեն և վորը կարգաց
Ռոզա Լուքսեմբուրգը: Այդ նամակը հետաքրքիր և նրանով,
վոր կուսակցութեանը խորհուրդ տարով պայքարել լիբերալիզմի
դեմ և ընդունելով ուսական պրոլետարիատի հատուկ դերը՝
վորպես ուսական հեղափոխութեան առաջնորդի՝ նամակը դրա-
նով իսկ ընդունում է բոլշևիզմի բոլոր հիմնական դրույթները:

Այսպիսով պարզ էր դառնում, վոր Յեւրոպայում ամենից
ավելի վործված և ամենից ավելի հեղափոխական դերմանական
սոցիալ-դեմոկրատիան բացելիքաց ու պարզորեն պաշտպանում է
բոլշևիկներին, վորպես իսկական մարքսիստներ, մարքսիզմի
դափնաձևների դեմ, մենչևիկներին դեմ, նրանց մղած պայքա-
րում:

Հետաքրքրական էն նաև ընկեր Տիշկոյի՝ նախագահութեան
կազմի լեհական պատմութեան ներկայացուցչի ճառի մեջ
յեղած վորոշ տեղերը: Յերկու Փրակցիսներն էլ հալատացնում
են մեզ, — սուսում էր ընկ. Տիշկոն, վոր իրենք հաստատապես
կանգնած են մարքսիզմի տեսակետի վրա: Յեւ յուրաքանչյուրի
համար հեշտ չէ հասկանալ, թե ո՞վ է վերջապես կանգնած այդ
տեսակետի վրա — բոլշևիկները, թե մենչևիկները... «Մենք ենք
կանգնած մարքսիզմի տեսակետի վրա» — ընդհատում են «ձախից»
միջանի մենչևիկները: «Վոչ, ընկերներ» — պատասխանեց նրանց
Տիշկոն, — «դուք կանգնած չեք, այլ պառկած եք այդ տեսակե-
տի վրա. վորովհետև ձեր ամբողջ անճարակութեանը պրոլե-
տարիատի դասակարգային պայքարի ղեկավարման գործում,
այն փաստը, վոր դուք կարողանում եք անդիր անել մեծ Մարք-
սի մեծ խոսքերը, բայց չեք կարողանում գործադրել դրանք, —
այս ամենը խոսում է այն մասին, վոր դուք վոչ թե կանգնած
եք, այլ պառկած եք մարքսիզմի տեսակետի վրա»:

Սա գեղարվեստականորեն գլխուկ էր:

Յեւ իսկապես, վերջերք թեկուզ հետևյալ փաստը: Մենչև-
իկները համախառնում են, թե սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը
միշտ և ամենուրեք հանդիսանում է պրոլետարիատն ինքնու-
րույն ուժի վերածելը: Ճիշտ է արդյոք այդ: Անկասկած ճիշտ
է: Սրանք Մարքսի մեծ խոսքերն են, վոր միշտ պետք է հիշի յուրա-
քանչյուր մարքսիստ: Բայց այդ խոսքերն ի՞նչպես են դործադրում
ընկ. մենչևիկները: Նրանք ոժանդակում են արդյոք, վոր պրո-
լետարիատը փաստորեն առանձնանա իրեն չըջապատող բուր-
ժուական տարրերի մասնալից՝ վորպես ինքնուրույն, անկախ

դասակարգ: Նրանք համախմբում են արդյոք հեղափոխական
տարրերին պրոլետարիատի շուրջը և պատրաստում են արդյոք
պրոլետարիատին հեղափոխութեան առաջնորդի դերի համար:
Փաստերը ցույց են տալիս, վոր մենչևիկներն այդպիսի բան
ընում չեն անում: Ընդհակառակը, մենչևիկները խորհուրդ են
տալիս պրոլետարիատին՝ ավելի համախառն համաձայնություններ
կայացնել լիբերալ բուրժուազիայի հետ, — և դրանով իսկ ոժան-
դակում են պրոլետարիատի վոչ թե առանձնանալուն՝ վորպես
ինքնուրույն դասակարգ, այլ նրա միախառնվելուն բուրժուա-
զիայի հետ: մենչևիկները խորհուրդ են տալիս պրոլետարիատին
հրաժարվել հեղափոխութեան առաջնորդի դերից, այդ դերը
գիջել բուրժուազիային, դնալ բուրժուազիայի հետևից, — և դրա-
նով իսկ ոժանդակում են պրոլետարիատի վոչ թե ինքնուրույն
քաղաքական ուժի վերածվելուն, այլ նրա՝ բուրժուազիայի պո-
չուկի վերածվելուն... Այսինքն, մենչևիկներն անում են ճիշտ
հակառակն այն բանի, ինչ պետք է անելին՝ յեղնելով մարքսիս-
տական ճիշտ դրույթից:

Այո, իրավացի չեր ընկ. Տիշկոն, չեր ասաց, թե մենչևիկ-
ները վոչ թե կանգնած են, այլ պառկած են մարքսիզմի տեսա-
կետի վրա...

Վիճարանությունները վերջանալուց հետո առաջարկվեց բա-
նաձևի յերկու նախագիծ — մենչևիկյան և բոլշևիկյան: Դրանցից
ձայների հսկայական մեծամասնութեամբ իրրի հիմք ընդունվեց
բոլշևիկների նախագիծը:

Այնուհետև ուղղումներ արվեցին նախագծի վերաբերյալ:
Մտցվեց մոտ 80 ուղղում: Ուղղումներն առաջարկվում էին
գլխավորապես նախագծի յերկու կետերի վերաբերյալ — պրոլե-
տարիատի, վորպես հեղափոխութեան առաջնորդի՝ վերաբերյալ
կետի, և մի այլ կետի՝ կազմակերպի վերաբերյալ, վորպես հա-
կահեղափոխական ուժի: Դա վիճարանությունների ամենահե-
տաքրքիր մասն էր, քանի վոր այդտեղ հատկապես խիստ կեր-
պով պարզվեց Փրակցիսների դեմքը: Առաջին կարևոր ուղղումն
առաջարկվեց ընկ. Մարտովի կողմից: Նա պահանջում էր «պրո-
լետարիատը վորպես հեղափոխութեան առաջնորդ» բառերը փո-
խարինել «պրոլետարիատը վորպես ավանգարդ» բառերով: Նա
պատճառարանում էր այն բանով, թե «այսպիսով» բառն ավելի
ճիշտ է արտահայտում միտքը: Նրան առարկեց ընկեր Ալեքսին-
սկին: Վերջինս ասաց, վոր բանը ճշտութեամբ չէ, այլ այն չեր-

կու հակադիր տեսակետներն են, վորոնք դրսևորվում են այդ կետի մեջ, քանի վոր «ավանդարդ» և «առաջնորդ» հասկացողութունները, յերկու միանգամայն տարբեր հասկացողութուններ են: Լինել ավանդարդ (առաջավոր ջոկատ)՝ նշանակում է կուլել առաջավոր շարքերում, գրավել ամենից ավելի գնդակոծման յենթակա կետերը, արյուն թափել, բայց միևնույն ժամանակ լինել ուրիշների կողմից զեկավարվող, ավյալ դեպքում բուրժուական դեմոկրատները կողմից, ավանդարդը յերբեք չի դեկավարում ընդհանուր պայքարը, բայց ավանդարդին միշտ դեկավարում են: Ընդհակառակը, լինել առաջնորդ՝ նշանակում է վոչ միայն կուլել առաջավոր շարքերում, այլև ղեկավարել ընդհանուր պայքարը, այդ պայքարն ուղղել դեպի իր նպատակը: Մենք, բոլշևիկներն, չենք ցանկանում, վոր պրոլետարիատին զեկավարեն բուրժուական դեմոկրատները, մենք ցանկանում ենք, վոր պրոլետարիատն ինքը զեկավարի ժողովրդի ամբողջ պայքարը և այդ պայքարն ուղղի դեպի դեմոկրատական հանրապետութունը:

Դրա հետևանքով Մարտովի ուղղումը տապալվեց:

Նույն խնդրի մյուս բոլոր ուղղումները նույնպես տապալվեցին:

Ուղղումների մյուս խումբն ուղղված էր կադետների մասին յեղած կետի դեմ: Մենչևիկներն առաջարկում էյին ընդունել, վոր կադետները դեռ չեն կանգնել հակահեղափոխության ուղովրա: Բայց համագումարը չընդունեց այդ առաջարկը, և այդ բնույթի բոլոր ուղղումները մերժվեցին: Այնուհետև մենչևիկներն առաջարկում էյին վորոչ զեպքերում թույլ տալ թեկուզ տխնիկական համաձայնութուն կնքել կադետների հետ: Համագումարը չընդունեց նաև այդ առաջարկը, տապալելով համապատասխան ուղղումները:

Վերջապես քվեարկելին ամբողջ բանաձևը և բանից դուրս յեկավ, վոր 159 ձայն կողմնակից են բոլշևիկյան բանաձևին, 104 ձայն՝ դեմ, իսկ մնացածները՝ ձեռնպահ են մնացել:

Ձայների հսկայական մեծամասնությամբ համագումարն ընդունեց բոլշևիկների բանաձևը:

Այնուհետև բոլշևիկների տեսակետը դարձավ կուսակցության տեսակետը:

Բացի դրանից, այդ քվեարկութունը տվեց յերկու կարևոր արդյունք:

Նախ՝ վերջ դրեց համագումարի ձևական, արհեստական բաժանմանը՝ հինգ ֆրակցիաների (բոլշևիկներ, մենչևիկներ, ղեհեր, լատիշներ, բուլղարներ) և սկզբ դրեց նոր, սկզբունքային բաժանման—բոլշևիկների (ներառյալ բոլոր ղեհերն ու լատիշներն մեծ մասը) և մենչևիկների (ներառյալ համարյա բոլոր բուլղարներին):

Յերկրորդ՝ այդ քվեարկութունը տվեց բանվորական դեկետներին՝ ըստ ֆրակցիաների բաշխված լինելու ամենից ավելի ճշգրիտ վիճակագրութունը. պարզվեց, վոր բոլշևիկյան ֆրակցիայի մեջ կան վոչ թե 38, այլ 77 բանվոր (38 դուժարած 27 լեհ, դուժարած 12 լատիշ), իսկ մենչևիկյան ֆրակցիայի մեջ վոչ թե 30, այլ 39 բանվոր (30 դուժարած 9 բուլղարներ): Մենչևիկիկյան ֆրակցիան դուրս յեկավ ինտելիգենտական ֆրակցիա:

IV

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Նախքան բանվորական համագումարի հարցի վերաբերյալ ծագած վիճարանությունների բնութագրմանն անցնելը, անհրաժեշտ էր ծանոթանալ հարցի պատմությանը¹: Բանն այն է, վոր այդ հարցը ծայրահեղորեն խճճված է ու վոչ-պարզ: Մինչդեռ մեր տարածաշրտությունների մյուս կետերի վերաբերյալ կուսակցության մեջ արդեն կան յերկու խտորեն վորոշակի հոսանքներ—բոլշևիկյան և մենչևիկյան,—բանվորական համագումարի հարցի վերաբերյալ մենք ունենք վոչ թե յերկու հոսանք, այլ ծայրահեղորեն չարդղված ու հակասական հոսանքների մի ամբողջ կույտ: Ճիշտ է, բոլշևիկները հանդես են դալիս համախմբված և վորոշակի—նրանք առհասարակ դեմ են բանվորական համագումարին: Դրան հակառակ, մենչևիկների մեջ տիրում է լիակատար քառս ու խառնաշփոթութուն. նրանք բաժանվել են բազմաթիվ խմբերի, և նրանցից յուրաքանչյուրը յերդում է իր դիտեցածին պես, չլսելով ուրիշներին: Մինչդեռ Պետերբուրգի մենչևիկներն Ակսելրոդի գլխավորությամբ բանվորական համա-

¹ Այդ առավել ևս անհրաժեշտ է, վորովհետև ընկ. մենչևիկները, փոխադրվելով բուրժուական թերթերի խմբագրությունները, չեղած բաներ են տարածում այդ հարցի անցյալի և ներկայի մասին (տես «Բանվորական համագումարի մասին» հոդվածը «Տոլարիշչում», վոր պատկանում է մի ահանավոր մենչևիկի գրչի և արտատպված է «Բախիսսկի Դենում»):

գումարն առաջարկում են կուսակցութիւնն ստեղծելու համար,— Մոսկվայի մենչեիկները Նիլի գլխավորութեամբ այդ համագումարն առաջարկում են վոչ թե կուսակցութեան շահերի ոգտին, այլ անկուսակցական «համառուսական բանվորական միութիւն» ստեղծելու նպատակով: Հարավի մենչեիկները գնում են եւ ալեւիւհեռու և Լարինի գլխավորութեամբ կոչ են անում բանվորական համագումար հրաւիրելու վոչ թե կուսակցութեան և վոչ թե «բանվորական համագումար», այլ ավելի լայն «աշխատավորական միութիւն» ստեղծելու նպատակով, վորը կարողանա ընդգրկել բոլոր պրոլետարական տարրերից բացի նաեւ ետերական, կիսաբուրժուական «աշխատավորական» տարրերը: Յետ եւ չեմ խոսում մյուս, ավելի պակաս ազդեցիկ խմբերի ու անձնավորութեանների մասին, ինչպիսիք են Ուլեսայի ու անդրկասպյան խմբերը և ինչպիսիք են Ծիծաղելի բրոշյուրի ցանցառ «հեւինակները»—այսպէս կոչված «Բրոշյուր» և «Շուրան»:

Սա՛յն այն խառնաշփոթութեանը, վոր թագավորում է մենչեիկների շարքերում:

Բայց ի՞նչպէս հրաւիրել բանվորական համագումարը, ինչպէ՞ս կազմակերպել այն, ինչի՞ հետ կապակցել նրա հրաւիրումը, ո՞ւմ հրաւիրել համագումար, ո՞վ պետք է իր վրա վերցնի համագումարի հրաւիրման նախաձեռնութեանը:

Այս բոլոր հարցերի վերաբերյալ մենչեիկները մեծ տիրում են նույն խառնաշփոթութեանը, ինչ վոր համագումարի նպատակի հարցի վերաբերյալ:

Այդ նույն ժամանակ նրանցից վոմանք առաջարկում են բանվորական համագումարի պատգամավորների ընտրութեանները կապակցել Ղուճայի դեւեգատների ընտրութեանների հետ և այդպիսով «գալթման միջոցով» կազմակերպել բանվորական համագումար,—մյուսներն առաջարկում են հուլիսը դնել կառավարութեան «թողտվութեան» վրա, ծայրահեղ դեպքում «թուլլալութեան» խնդրել նրանից, իսկ վոմանք եւ խորհուրդ են տալիս դեւեգատներին ուղարկել արտասահման, թեկուզ նրանք լինեն 3—4 հազար հոգի, և այնտեղ անդիպալ կերպով դումարել բանվորական համագումարը:

Մինչդեռ մենչեիկներից վոմանք առաջարկում են համագումարում ներկայացուցիչներ ունենալու իրավունք տալ միայն ձեւակերպված բանվորական կազմակերպութեաններին, մյուսները խորհուրդ են տալիս համագումար ներգրավել առհասարակ ամ-

բողջ կազմակերպված ու անկազմակերպ պրոլետարիատի ներկայացուցիչներին, պրոլետարիատ, վորն իր շարքերում ունի առնուվազն 10 միլիոն անգամ:

Մինչդեռ մենչեիկներից վոմանք առաջարկում են բանվորական համագումարը հրաւիրել սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան նախաձեռնութեամբ և ինտելիգենտների մասնակցութեամբ, մյուսները խորհուրդ են տալիս դեն շարքել թե կուսակցութեանը, թե ինտելիգենտներին, և համագումարը հրաւիրել միայն իրենց՝ բանվորների նախաձեռնութեամբ, առանց ինտելիգենտների վորեւ մասնակցութեան:

Մինչդեռ մենչեիկներից վոմանք պնդում են բանվորական համագումարն անհապաղ հրաւիրելու վրա, մյուսներն առաջարկում են դա՛ հետաձգել անորոշ ժամանակով, առայժմ սահմանափակվելով բանվորական համագումարի գաղափարի ազդեցիկությամբ:

Իսկ ի՞նչպէս վարվել դոյութեան ունեցող Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցութեան հետ, վորն ահա արդեն միքանի տարի յե, ինչ դեկավարում է պրոլետարիատի պայքարը, վորն իր շարքերում համախմբել է 150 հազար անգամ, արդեն ունեցել է հինգ համագումար և այլն և այլն: «Սատանայի գի՞րկն ուղարկել նրան», թե՞ վարվել վորեւ այլ կերպ:

Դրան բոլոր մենչեիկները, Ակսելրոդից սկսած մինչև Լաւրինը, միաձայն պատասխանում են, թե՛ մեկն պրոլետարական կուսակցութիւնն չունենա: «Բանն եւ հենց այն է, վոր մենք չունենք կուսակցութիւն»,—ասում էյին մեզ համագումարում մենչեիկները,—«մեկն ունենա միայն մանր-բուրժուական ինտելիգենցիայի կազմակերպութիւնն», վորը պետք է բանվորական համագումարի միջոցով փոխարինել կուսակցութեամբ: Այսպէս հայտարարեց կուսակցական համագումարում մենչեիկների կողմից դեկլուցողը, ընկ. Ակսելրոդը:

Բայց ներեցեք, այդ ի՞նչպէս: Նշանակում է՝ մեր կուսակցութեան այդ բոլոր համագումարները՝ առաջինից (1898 թ.) մինչև վերջինը (1907 թ.), վորոնց կազմակերպման մեծ ընկ. մենչեիկները ամենայեւանդուն մասնակցութեանն են ունեցել պրոլետարական դրամների և ուժերի այդ ամբողջ հսկայական ծախսումը,—ծախսում, վորն անհրաժեշտ է համագումարներին կազմակերպման համար, ծախսում, վորի համար մենչեիկները նույնքան մեղավոր են, վորքան և բոլշեիկները,—այդ ամենը

Նշանակում է միմիայն խաբեբայությունն ու վարխեցիությունն և յեղել:

Նշանակում է՝ կուսակցության այդ բոլոր մարտական կոչելը՝ ուղղած պրոլետարիատին, կոչելը, վորոնք ստորագրված են նաև մենչևիկների կողմից, այդ բոլոր գործադուլներն ու ապստամբությունները 1905—06—07 թվականների ընթացքում, վոր տեղի յեն ունեցել կուսակցության գլխավորությամբ, հաճախ կուսակցության նախաձեռնությամբ, պրոլետարիատի այդ բոլոր հաղթանակները, վորոնք ձեռք են բերվել մեր կուսակցության գլխավորությամբ, պրոլետարիատի այդ բոլոր հաղթարարը գոհերը, վորոնք ընկել են Պետերբուրգի, Մոսկվայի փողոցներում և այլն, վորոնք փակված են Սիբիրում, կորստյան են մատնված բանտերում համառն կուսակցության, կուսակցության դրոշի տակ, —այդ ամենը միայն կատակերգությունն ու խաբեբայությունն է:

Յեւ նշանակում է՝ մենք չունենք կուսակցություն: Մենք ունենք միայն «մանր բուրժուական ինտելիգենցիայի կազմակերպություն»:

Սա, իհարկե, ուղղակի սուտ եր, դայրացուցիչ, լիտի սուտ:

Դրանով ել յերեւի բացատրվում է այն անսահման դայրությունը, վոր Ակսելրոդի վերահիշյալ հայտարարությունն առաջացրեց Պետերբուրգի ու Մոսկվայի բանվոր ղեկեդատների մեջ: Յատկելով իրենց տեղերից, նրանք յեռանդադին պատասխանում էին գեկուցող Ակսելրոդին, թե՝ «այդ դու, արտասահմանում նստողդ ես բուրժուա, և վոչ թե մենք. մենք բանվորներ ենք և ունենք մեր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վորին մենք թույլ չենք տա ստորացնել...»

Բայց յենթադրենք, վոր բանվորական համագումարը տեղի կունենա, յենթադրենք, վոր արդեն տեղի յե ունեցել: Նշանակում է գոյություն ունեցող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հանձնեցինք արխիվ, այսպես թե այնպես հրավիրեցինք բանվորական համագումար, և ցանկանում ենք այդ համագումարում կազմակերպել վոչ այն և «բանվորական», վոչ այն և «աշխատավորական» միություն: Իսկ ի՞նչ կլինի այնուհետև: Ի՞նչ ծրագիր կընդունի այդ համագումարը: Ի՞նչպիսի կերպաբանք կունենա բանվորական համագումարը:

Մենչևիկներից վոմանք պատասխանում են, թե բանվորական համագումարը կարող է ընդունել սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրը, իհարկե վորոչ կըճատումներով, բայց տեղն ու տեղը

նրանք ավելացնում են, թե համագումարը կարող է և չընդունել սոցիալ-դեմոկրատների ծրագիրը, վորն, իրենց կարծիքով, պրոլետարիատի համար առանձին չարիք չի ներկայացնում: Մյուսները պատասխանում են ավելի վճռականորեն — քանի վոր մեր պրոլետարիատն ուժեղ կերպով սողորված է մանր-բուրժուական ձգտումներով, ապա ամենայն հավանականությամբ բանվորական համագումարը կընդունի վոչ թե սոցիալ-դեմոկրատական, այլ մանր-բուրժուական դեմոկրատական ծրագիր: Բանվորական համագումարում պրոլետարիատը կկորցնի սոցիալ-դեմոկրատական ծրագիրը, բայց դրա փոխարեն ձեռք կբերի բանվորական կազմակերպություն, վորը բոլոր բանվորներին կմիացնի մեկ միության մեջ: Այսպես է ասում, որինակ, Մոսկվայի մենչևիկների պարագլուխ Գ. Ջերեվանինը (տես «Տակտիկայի պրոբլեմները»):

Յեւ այսպես՝ «բանվորների միություն առանց սոցիալ-դեմոկրատական ծրագրի» — այս է բանվորական համագումարի հայանական արդյունքը:

Այսպես են, համենայն դեպս, մտածում իրենք մենչևիկները:

Ըստ յերեւութին բանվորական համագումարի հրավիրման նպատակների ու յեղանակների վորոչ հարցերում միմյանց հետ անհամաձայն մենչևիկները համաձայն են այն բանում, վոր «մենք չունենք կուսակցություն, այլ ունենք միայն մանր-բուրժուական ինտելիգենցիայի կազմակերպություն, վորը պետք է հանձնել արխիվ...»

Այս շրջանակների մեջ ել հենց պատվում եր Ակսելրոդի գեկուցումը:

Ակսելրոդի գեկուցումից պարզվեց, վոր բանվորական համագումարի ոգտին մղվող ագիտացիան գործնականորեն անխուսափելի կերպով կհանդի կուսակցության դեմ ուղղված, նրա դեմ կովելու ագիտացիայի:

Իսկ բանվորական համագումարի հրավիրման ուղղությամբ կատարվող գործնական աշխատանքը նույնպես անխուսափելիորեն կհանդի մեր ներկա կուսակցության կազմալուծման ու քայքայման գործնական աշխատանքին:

Մինչդեռ մենչևիկներն իրենց գեկուցողի բերանով, ինչպես նաև բանաձևի իրենց նախագծի մեջ, համագումարին խնդրում էին արգելել ագիտացիան այն փորձերի դեմ, վորոնք ուղղված են բանվորական համագումար կազմակերպելուն, այսինքն այն

փորձերի, վորոնք տանում են դեպի կուսակցութեան կազմալուծումը:

Յեւ վետաքրերը եւ մենչեիկյան հետորոնքի ճառերի մեջ (բացառութեամբ Պլեխանովի, վորը փաստորեն բանվորական համագումարի մասին վրէժնէ չասաց) կարմիր թելի պէս անցնում եյին հետեյալ լոզունգները՝ կորչի կուսակցութիւնը, կորչի սոցիալ-դեմոկրատիան, կեցցե անկուսակցականութիւնը, կեցցե վոչ-սոցիալ-դեմոկրատական «բանվորական միութիւնը»: Այս լոզունգները բացահայտորեն չեյին առաջադրւում հետորոնքի կողմից, բայց նկատւում եյին նրանց ճառերի մեջ:

Իզուր չէ, վոր բոլոր բուրժուական գրողները, սկսած սինգլիկալիստներից ու եսերներից մինչեւ կադետներն ու ուլտար-բիստները—իզուր չէ, վոր նրանք բոլորն այդպէս ջերմորեն արտահայտւում են բանվորական համագումարի ոգտին. չե՞վոր նրանք բոլորը մեր կուսակցութեան թշնամիներն են, իսկ բանվորական համագումարի հրաւիրման ուղղութեամբ կատարվող գործնական աշխատանքը կարող եր զգալիորեն թուլացնել եւ կազմալուծել կուսակցութիւնը: Ինչպե՞ս ապա նրանք շփոթում են «բանվորական համագումարի գաղափարը»:

Միանգամայն այլ բան եյին ասում բոլշեիկ հետորոնքները:

Բոլշեիկները կողմից գեկուցողը, ընկ. Լինդովը, համառոտակի բնութագրելով մենչեիկների մեջ յեղած ամենազլխաւոր հոսանքները, անցաւ այն պայմանների պարզաբանմանը, վորոնք ծնեցին բանվորական համագումարի գաղափարը: Բանվորական համագումարի ոգտին մղվող ագիտացիան սկսվեց 1905 թվականին, մինչեւ Հոկտեմբերյան որերը, ռեպրեսիաների մոմենտին: Հոկտեմբերյան-նոյեմբերյան որերին այդ ագիտացիան դադարեց: Նոր ռեպրեսիաների հաջորդ ամիսներին բանվորական համագումարի ոգտին մղվող ագիտացիան նորից աշխուժացավ: Առաջին Դումայի ժամանակ, հարաբերական ազատութեան որերին, ագիտացիան հանդարտվեց: Այնուհետեւ, Դումայի ցրումից հետո, նորից ուժեղացավ եւ այլն: Հետեւութիւնը պարզ է. հարաբերական ազատութեան որերին, յերբ կուսակցութիւնը հնարավորութիւն ունի ազատորեն ընդարձակելու, ագիտացիան բանվորական համագումարի ոգտին՝ «լայն անկուսակցական կուսակցութիւն» ստեղծելու նպատակով, բնականորեն կորցնում է իր հողը. եւ ընդհակառակը, ռեպրեսիայի որերին, յերբ նոր անդամների ներհոսումը կուսակցութեան մեջ փոխա-

դինվում է անդամների արտահոսումով, ագիտացիան հոգուտ բանվորական համագումարի, վորպէս արհեստական միջոցի՝ նեղ կուսակցութիւնն ընդարձակելու կամ «լայն անկուսակցական կուսակցութեամբ» փոխարինելու համար, վորոչ հող ե գտնում: Բայց ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր վոչ մի արհեստական միջոց չի ողնի դործին, վորովհետեւ կուսակցութիւնն իսկապէս լայնացնելու համար հարկաւոր է քաղաքական ազատութիւն, եւ վոչ թէ բանվորական համագումար, վորն ինքը կարիք չէ զգում այդպիսի ազատութեան:

Այնուհետեւ: Բանվորական համագումարի գաղափարը, վերցրած նրա կոնկրետ տեսքով, արմատապէս կեղծ է, վորովհետեւ հենվում է վոչ թէ փաստերի, այլ վոչ-ճիշտ դրույթի վրա այն մասին, թէ «մենք չունենք կուսակցութիւն»: Բանն այն է, վոր մենք ունենք պրոլետարական կուսակցութիւն. նա բարձրաձայն խոսում է իր գոյութեան մասին. նա չափազանց լուրջ կերպով իր մասին զգալ է տալիս պրոլետարիատի թշնամիներին—այդ շատ լավ դիտեն իրենք մենչեիկները,—եւ հենց այն պատճառով, վոր մենք արդեն ունենք այդպիսի կուսակցութիւն, հենց այդ պատճառով բանվորական համագումարի գաղափարն արմատապէս կեղծ է: Իհարկէ, յեթե մենք չունենայինք այնպիսի կուսակցութիւն, վորն իր շարքերում հաշվում է ալիւլի քան 150 հազար՝ առաջաւոր պրոլետարներ եւ իր հետեւից է տանում հարյուր-հազարավոր մարտիկներ, յեթե մենք ներկայացնեյինք քիչ ազդեցիկ մարդկանց մի վոքը խումբ, նման վաթսուհան թվականների գերմանական սոցիալ-դեմոկրատներին կամ անցյալ դարի յոթանասնական թվականների Ֆրանսական սոցիալիստներին,—մենք ինքներս այն ժամանակ կաշխատեյինք հրաւիրել բանվորական համագումար, նրանից սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւն դուրս բերելու նպատակով: Բայց բանն էլ այն է, վոր մենք արդեն ունենք կուսակցութիւն, իսկական պրոլետարական կուսակցութիւն, վորը հսկայական սղդեցութիւն է վայելում մասսաների մեջ, եւ բանվորական համագումար հրաւիրելու համար, Փանտաստիկ «անկուսակցական կուսակցութիւն» ստեղծելու համար մենք անխուսափելիորեն հարկադրված կլինենք նախ եւ սուաջ «վերջ դներ» գոյութիւն ունեցող կուսակցութեանը, նախ եւ առաջ քայքայել այդ կուսակցութիւնը:

Ահա թէ ինչու բանվորական համագումարի հրաւիրման ուղղութեամբ կատարվող աշխատանքն անխուսափելիորեն դործնա-

կանում կհանդի կուսակցութեան կազմալուծման աշխատանքի։ Իսկ կհաջողվի՞ արդյոք փոխարենը յերեւելից ստեղծել «լայն անկուսակցական կուսակցութիւն» և կարիք կա՞ արդյոք ստեղծելու այդ—դա դեռ հարց է։

Ահա թե ինչու մեր կուսակցութեան թշնամիները, զանազան կազմաւորումներ ու ոկոյարրիւտներ, այդպես փոխաձայնորեն դուրս բանում են մենչեիկներին՝ բանվորական համագումարի ոգտին մղվող ագիտացիայի համար։

Ահա թե ինչու բոլշեիկները կարծում են, վոր բանվորական համագումարի հրավիրման ուղղութեամբ աշխատանք կատարելը վտանգավոր է, վնասակար։ Վորովհետեւ դա վարկարեկում է կուսակցութեանը մասսայի աչքում և այդ մասսային յենթարկում է բուրժուական դեմոկրատիայի աղբեցութեանը։

Մոտավորապես այսպես եր ասում ընկեր Լինդովը։

Հանուն բանվորական համագումարի՝ ընդդէմ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան, թե՞ հանուն կուսակցութեան՝ ընդդէմ բանվորական համագումարի։

Այսպես եր դրված հարցը համագումարում։

Բանվոր դելեգատ բոլշեիկները միանգամից հենց հասկացան հարցը և յեռանդուն կերպով հանդես յեկան «ի սրաշտպանութիւն կուսակցութեան»։ «Մենք կուսակցութեան պատրիտներ ենք»—ասում էին նրանք,—«մենք սիրում ենք մեր կուսակցութիւնը և թույլ չենք տա, վոր նրան վարկարեկեն հոգնած ինտելիգենտները»։

Հետաքրքիր է, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչը, ընկ. Ռոզա Լուքսեմբուրգը, լիովին համաձայնեց բոլշեիկների հետ։ «Մենք,—ասում եր նա,—գերմանական սոցիալ-դեմոկրատներս, չենք կարող հասկանալ ընկ. մենչեիկների ծիծաղելի չիօթվածութիւնը, վորոնք չոչափելով են վորոնում մասսային, մինչդեռ մասսան ինքն է վորոնում կուսակցութեանը և անգուսպ կերպով փարվում և նրան...»

Վիճարանութուններից պարզվեց, վոր հետորների հսկայական մեծամասնութիւնը պաշտպանում է բոլշեիկներին։

Վիճարանութիւնները վերջանալուց հետո քվեարկութեան դրվեց բանաձեռ յերկու նախագիծ—բոլշեիկներին և մենչեիկներին։ Դրանցից իբրեւ հիմք ընդունվեց բոլշեիկների նախագիծը։ Սկզբունքային բնութիւն ուղղումները համարյա բոլորը մերժվեցին։ Ընդունվեց միայն մեկ, քիչ թե շատ լուրջ ուղղում՝

բանվորական համագումարի հարցի քննարկման ազատութիւնը սահմանափակելու դէմ։ Բանաձեռն ամբողջապես խոսում եր այն մասին, վոր «բանվորական համագումարի գաղափարը տանգում է դեպի կուսակցութեան կազմալուծում», «դեպի բանվորական լայն մասսաների բուրժուական դեմոկրատիայի աղբեցութեանը յենթարկելը» և, վերջին աշխատին, վնասակար է պրոլետարիատի համար։ Ըստվորում բանաձեռը բանվորական համագումարը խոտորեն տարբերում եր բանվորական դեպուտատների խորհուրդներից և նրանց համագումարներից, վորոնք վոչ միայն չեն կազմալուծում կուսակցութիւնը, վոչ միայն չեն մրցում նրա դէմ, այլ ընդհակառակը, ամբողջում են կուսակցութիւնը, ընթանալով նրա հետից և հեղափոխական վերելքի բուսկներին ոգնելով նրան դործնական հարցերի լուծման մեջ։

Իվերջո բանաձեռն ամբողջութեամբ ընդունվեց 165 ձայնի մեծամասնութեամբ՝ ընդդէմ 94-ի։ Մնացածները ձեռնպահ մնացին։

Այսպիսով, համագումարը մերժեց բանվորական համագումարի գաղափարը՝ վորպես վնասակար, հակակուսակցական։

Այդ հարցի վերաբերյալ կատարված քվեարկութիւնը մեզ համար բացահայտեց հետեւյալ կարեւոր յերեւոյթը։ Դուք յե՞կա՞վ, վոր քվեարկութեանը մասնակցող 114 բանվոր դելեգատներից բանվորական համագումարի ստին քվեարկել են միայն 25 հոգի։ Մնացածները դէմ են քվեարկել։ Տոկոսային հարաբերութեամբ, բանվորական դելեգատներին 22%-ը թեր է քվեարկել բանվորական համագումարին, 78%-ը՝ դէմ։ Յե՞վ, վորը հատկապես կարեւոր է, բանվորական համագումարի ոգտին քվեարկած 94 դելեգատներից բանվորներ են միայն 26%-ը, ինտելիգենտներ՝ 74%-ը։

Իսկ չե՞ վոր մենչեիկներն ամբողջ ժամանակ աղաղակում էին, թե բանվորական համագումարի գաղափարը բանվորական չաղափար է, թե միայն «ինտելիգենտ» բոլշեիկներն են դիմադրում համագումարի հրավիրմանը, և այլն։ Յեթե դատելու լինենք այդ քվեարկութեամբ, ապա պետք է ամէլի չուտ ընդունել, վոր բանվորական համագումարի գաղափարը, ընդհակառակը, ինտելիգենտ ֆանտազիաների գաղափար է...

Զե՞ վոր նույնիսկ մենչեիկ բանվորներն ըստ յերեւոյթին թեր չեն քվեարկել բանվորական համագումարին. 39 բանվոր դելեգատներից (30 մենչեիկ՝ գումարած 9 բուրժուական) քվեարկել են միայն 24 հոգի։



Խմբագիր Ա. Մեղինյան
Տեխն. խմբ. Գ. Զեկյան
Սրբագրիչ Ա. Մանուկյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արուստյան

Դրավիտի լիազոր. Վ. 1184, հրատ. № 823
Պատվեր № 155, տիրաժ 4000
Թղթի չափեր 62×92 1/32, 23 1/4 տպ. մամուլ. 1 տպ. մամ. 38.400 տպ. նիշ
Հանձնվել և արտագրություն 8/V 1940 թ.
Ստորագրվել և տպագրվել 9/VI 1940 թ.
Դիւնը 30 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Յերևան, Ալևանյանի խճառ № 65

ԳԻՆԸ 30 Կ.

И. В. СТАЛИН
ЛОНДОНСКИЙ СЪЕЗД РСДРП
Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

ՀՀ Ազգային գրադարան



NL0179234

